

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ ՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՎԵՐՑՎԱԾ ... ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ

«Մենք հասարակություն չենք, մենք մարդկանց խումբ ենք». արդեն դժվար է հիշել, թե ու՞մն է այս միտքը:

Հայտնի բան է, Հայաստանում հանրային կարծիքի ուսումնասիրությունները ահագին վարկաբեկված են, որպեսզի վստահելի լինեն այնքան, որ մարդիկ, ու հատկապես, ուսումնասիրությունների օբյեկտները, հաշվի նստեն այդ հավաքական տեսակետների հետ: Պատճառներից մեկը այդ ուսումնասիրությունների պատվիրատուների գորեղ ազդեցիկությունն է՝ հարցումների և դրանց վերլուծությունների իրական պատկերի վրա: Մեր իրականությունը առայժմ չի հանդուրժում կառուցողական բազմակարծություն, լինի դա թե հասարակ կենցաղային, թե իշխանության համակարգերում, կամ՝ առավելևս իշխանություն-հասարակություն կապի ոլորտում: Բազմակարծության գոյությունն ավելի շատ թվացյալ և երևութական է, քան իրական ու շոշափելի: Դրա պատճառները խորն են ու բազմաշերտ, և այս մակարդակում դրա վերլուծությունը գրեթե անօգուտ բան է:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբը արդեն մեկ տարուց ավելի է, ինչ հանրային կարծիքի ուսումնասիրություններ է իրականացնում ամենատարբեր խնդիրների և առարկաների շուրջ: ՁԼՄ, քաղաքական գործիչների վարկանիշեր, հանրային խնդիրներ, հավանական թեկնածուներ և այլն: Այդ բոլոր ուսումնասիրությունների արդյունքները մշտապես արտացոլվել են «Ասպարեզ» հանդեսի 1-10-րդ համարներում, հարցումներն իրականացնողները բազմաթիվ ասուլիսներ են տվել դրանց կապակցությամբ, մի շարք քննարկումներ ու բանավեճեր են կազմակերպվել այդ ուսումնասիրությունների օբյեկտիվության, մեթոդաբանության, արդյունավետության և հազար ու մի այլ հարցերի շուրջ: Հիմնական վեճերը ծավալվել են հարցումների օբյեկտների շահերի բախման ոլորտում, երբ հանրային կարծիքն ուսումնասիրվել է վարկանիշերի պարզման նպատակով. հեռուստատեսություններ, իշխանությունների ներկայացուցիչներ, թեկնածուներ և այլն: Գրեթե միշտ, հոգու խորքում կամ բացահայտ, դժգոհել են նրանք, ովքեր Ասպարեզի հետազոտությունների արդյունքում պարզված վարկանիշերը ավելի ցածր են գտել, քան իրենց կարծածն էր: Հաճախ, երբ փորձել ենք պարզել, թե ինչի վրա են հենվում իրենց մասին իրենց ունեցած կարծիքները, դատարկ զրոյի ենք հանդիպել. պարզվում է, իրենց մասին իրենց կարծիքները հենվում են իրենց և հասարակության տարբեր ներկայացուցիչների անձնական շփումների ժամանակ հայտնված տեսակետների վրա: Իրենց՝ հեռուստատեսությունների, պաշտոնյաների, այս կամ այն պաշտոնի հավակնորդների համար՝ շոկային իրադրություն էր ստեղծվում. իրենք, պատկերավոր ասած՝ գիտեն, որ ամենալավն են, սիրված և ցանկալի, մեկ էլ հոպ՝ ինչ-որ Ասպարեզի ուսումնասիրություններով իրենց հավանում է լսարանի/ընտրազանգվածի միայն 10-15-32 տոկոսը: Է՞ս ինչ խայտառակություն է, իրենց կարծիքով Ասպարեզը դիտավորյալ նվազեցնում է իրենց վարկանիշը: Եվ սա ամենը չէ, շատերը կարծում էին, որ Ասպարեզը ուրիշների վարկանիշերի իրական ցուցանիշներն էլ աճեցնում է՝ ի վնաս իրենց...

Անցած մեկ տարում բազմիցս հետազոտել ենք գործող քաղաքապետի վարկանիշը, որը, ամբողջ այդ ընթացքում, շարունակական աճի միտում է ունեցել: Մեր այդ հետազոտությունները պարբերաբար արժանացել են քաղաքապետի ընդդիմախոսների և մի խումբ մտավորականների քննադատությանը: Նրանց կարծիքով, մենք անբարեխիղճ ենք եղել և ավելի մեծ ցուցանիշ էինք հրապարակում, քան իրականում ուներ քաղաքապետը: Մինչև այս ծրագրի իրականացումը մենք բազմաթիվ հողվածներով, ասուլիսներով բացատրում և մեկնաբանում էինք մեր հետազոտությունները, որոնց շատերը չէին վստահում, հատկապես՝ քաղաքապետի պաշտոնի հավանական թեկնածուները: Ստորև բերվում է 2001-2002 թվականներին Գյումրիի քաղաքապետի և այդ պաշտոնի մի քանի հավանական հավակնորդների վարկանիշերի դինամիկան ըստ ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբի հետազոտությունների.

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ	2001 թ.		2002 թ.	
	11-18 հոկտեմբեր	5-15 դեկտեմբեր	6-17 փետրվար	14-20 հունիս
ԳՅՈՒՄՐԻՈՒՄ	200 հարցվող	200 հարցվող	200 հարցվող	200 հարցվող
Վարդան Ղուկասյան	33.5 %	43,0 %	47,0 %	40,0 %
Մարգա. Մարգարյան	20.5 %	22,0 %	10,0 %	15,0 %
Սուքիաս Ավետիսյան	5.5 %	1,5 %	7,5 %	3,5 %
Լյովա Գալստյան	1.5 %	1,0 %	1,5 %	4,0 %
Մարտին Զիլֆինյան	0.5 %	0,0 %	0,0 %	0,0 %
Հովսեփ Սիմոնյան	0,0 %	0,0 %	0,0 %	0,0 %

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ	2002 թ.		
	14-18 սեպտեմբեր	6-9 հոկտեմբեր	15-17 հոկտեմբեր
ԳՅՈՒՄՐԻՈՒՄ	600 հարցվող	600 հարցվող, միայն գրանցված թեկնածուների վերաբերյալ	600 հարցվող, միայն գրանցված թեկնածուների վերաբերյալ
Վարդան Ղուկասյան	49,83 %	58,50 %	69,00 %
Մարգա. Մարգարյան	7,41 %	-	-
Սուքիաս Ավետիսյան	2,25 %	-	-
Լյովա Գալստյան	0,48 %	9,16 %	7,00 %
Մարտին Զիլֆինյան	1,77 %	11,16 %	16,83 %
Հովսեփ Սիմոնյան	0,0 %	14,33 %	ինքնաբացարկ

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին նախորդող 15 օրերի ընթացքում քաղաքապետի, ավագանու անդամության և ՀՀ նախագահի հավանական թեկնածուների վերաբերյալ Գյումրիում հարցվել է 1200 մարդ՝ գրեթե յուրաքանչյուր 90-րդ չափահաս քաղաքացին: Հարցման այսպիսի խտությունը, ինչպիսին չէր եղել նախկինում, նպատակ ուներ իմանալ գյումրեցիների առավել հավաստի փոքր սխալանքով, միջին կարծիքը՝ թեկնածուների մասին:

Նախորդ բոլոր հարցումներն արվել են հարցվողների բնակարաններում և կացարաններում, անձնական գրույցի միջոցով, անստորագիր: Հարցվողներն ընտրվել էին Գյումրի քաղաքում բնակչության տեղաբաշխման խտության համամասնությամբ: Բնակարանում որպես հարցվող ընտրվել էր այն չափահասը, որի ծննդյան օրն առաջիկայում ամենաառաջինն էր:

Վերին աղյուսակում բերված վերջին երկու հարցումները (6-9, 15-17 հոկտեմբերի) իրականացվել են քվեարկության գործընթացին առավել մոտեցված տարբերակով. հարցվողն իր բնակարանում ստացել է քվեաթերթիկին առավելապես նմանեցված հարցաթերթիկը, անցել սենյակներից մեկը, երեք հարցերին պատասխանել է քաղաքապետի, ավագանու անդամի և նախագահի նախընտրելի թեկնածուի անվան դիմաց V-աձև նշում կատարելով, ապա, վերադառնալով, ծավալած հարցաթերթիկը գցել է հարցնողի ձեռքի տոպրակը, խառնելով այնտեղ եղած, նշումներով այլ հարցաթերթիկների հետ:

Չբավարարվելով կատարածով, որոշվեց նույն հարցի ուսումնասիրման նպատակով ևս մեկ հարցում կատարել, որի մեթոդը լրջորեն տարբերվում էր նախորդից: Ուսումնասիրվեցին 1996 և 1999 թվականների ՏԻՄ ընտրությունների ժամանակ ընտրատեղամասերում գրանցված արդյունքները, դրանցից առանձնացվեցին այն տեղամասերը՝ թաղերը, որոնցում այդ ընտրությունների ժամանակ ստացվել էին մոտավորապես այն արդյունքները, ինչպիսիք՝ թեկնածուների հավաքած ձայների համամասնությամբ արձանագրվել էին ամբողջ քաղաքի արդյունքներում: Այլ խոսքով, 1996 և 1999 թվերի ընտրությունների արդյունքներն ուսումնասիրելով հայտնաբերվեցին այն թաղամասերը, որոնք թեկնածուների տվյալ խմբի

դեպքում հանրային տրամադրությունների առումով համարվեցին մոդելային: Հասկանալի է, դրանք այն թաղամասերն էին, որոնցում քաղաքապետի թեկնածուների ազդեցիկության հարաբերակցությունը համամասնական էր ամբողջ քաղաքի վրա նրանց ունեցած ազդեցիկությանը, այսինքն, թեկնածուների բնակության թաղամասերը ինքնաբերաբար դուրս էին մնում այդ մոդելային թաղամասերի ցանկից: 1996-ին քվեարկվել էր 6 թեկնածու, 1999-ին քվեարկվել էր այդ 6-ից 2-ը, և 5 հոգի: Պարզվեց, որ այդ երկու ընտրությունների ժամանակ ընդհանուր քաղաքի 55 ընտրատեղամասերից միայն 8-ն էին, որ կարելի էր համարել մոդելային ինչպես 1996-ի, այնպես էլ 1999-ի ընտրությունների համար:

2002-ի 3 թեկնածուներից միայն մեկը՝ գործող քաղաքապետն էր, որ որպես թեկնածու մասնակցել էր նաև նախորդ ՏԻՄ ընտրություններում, մյուս 2 թեկնածուները նախկինում այդ պաշտոնի համար չէին մրցել: Հայտնաբերված 8 մոդելային թաղամասերից երկուսը ևս կրճատվեցին, որովհետև դրանք գտնվում էին այս երկու թեկնածուների գերակշռող ազդեցության տակ և թեկնածուների այս կազմի համար չէին կարող մոդելային լինել: Ի վերջո, ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբը հոկտեմբերի 15-ից 17-ը այդ վեց թաղամասերում բնակիչներին բաժանեց հարցաթերթիկներով 100 ծրար: Հարցաթերթիկները ներառում էին հիմնական երկու հարց՝ քաղաքապետի նախընտրելի թեկնածուի և «<< նախագահի հավանական թեկնածուներից նախընտրելիի մասին: Ծրարները կրում էին «Ասպարեզի» հասցեն և նամականշված էին: Հարցվողը պիտի 1 օրվա ընթացքում V-աձև նշումով լրացներ հարցաթերթիկը, այն և ծրարը թողներ անստորագիր, փակեր ծրարն ու տաներ մոտակա փոստատուն մեզ ուղարկելու, ոչ մի ծախս և ոչ մի լրացուցիչ հոգս: Այսպիսով, հարցման այդ մոդելային տարածքներում բաժանվեց 100-ական հարցաթերթիկ և ծրար: Ծրարներ ստացած ընտանիքներում այլ հարցումներ չեն կատարվել: Մինչև հոկտեմբերի 18-ը «Ասպարեզ» վերադարձավ 74-ը: Դրանցում արտացոլված քաղաքապետի թեկնածուի նախապատվության վերաբերյալ արդյունքները բերվում են ստորև:

Քաղաքապետի գրանցված թեկնածուներ	15- 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2002 Թ.	
	թիվ	% հարցվածներից
<i>Լևոն Գալստյան</i>	6	8,10
<i>Մարտին Զիլֆինյան</i>	11	14,86
<i>Վարդան Դուկասյան</i>	50	67,56
<i>Բոլորին դեմ են</i>	7	9,45
<i>Նամակը չի վերադարձել</i>	26	-
<i>Ընդամենը</i>	100	99,97

2նայած ծրարով հարցումների քանակի փոքրությանը, ակնհայտ է մոդելային տարածքների (այս մեթոդը հայտնի է Նյու-Հեմփշիրյան անունով) մեթոդով կատարված հարցումների արդյունքների գրեթե նույնականությունը՝ նույն օրերին կատարված կոնտակտային հարցումների արդյունքների հետ՝ երբ ամբողջ քաղաքից հարցվել էր 600 հոգի (2-րդ աղյուսակի երրորդ սյունակ):

Հարցումների և՛ քանակական, և՛ որակական ցուցանիշները ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբին մեծացրին մի հետաքրքիր նախաձեռնություն: Որոշվեց հոկտեմբերի 18-ին՝ ընտրություններից 2 օր առաջ հանդես գալ կանխատեսումներով:

Կազմվեց մեկ էջից և 6 կետերից բաղկացած կանխատեսում, որը 15 փակ ծրարներով բաժանվեց Գյումրիում գործող հեռուստատեսություններից 2-ին, թեկնածուներից մի քանիսին, հետաքրքրված հասարակական կազմակերպությունների ղեկավարներին և այլն, խնդրանքով՝ այդ կանխատեսումները չբացել մինչև հոկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 22-ը:

Կանխատեսման մեջ բերված էին Գյումրիում մարվելիք քվեաթերթիկների թիվը, քաղաքապետի բոլոր թեկնածուների օգտին տրվող ձայների հավանական թվերը, անվավեր քվեաթերթիկների թվերը, ավագանու անդամության անցողիկ հավանական ձայնաքանակները, ինչպես նաև քաղաքապետի թեկնածուների օգտին տրվելիք քվեների տոկոսային բաշխումները և բացարձակ հավանական թվերը: Այդ կանխատեսումները տարածվեցին մոտ 200 էլեկտրոնային հասցեներով՝ հավանական հետաքրքրվողներին, և հոկտեմբերի 20-ին ժամը 20-ից՝ քվեարկության ավարտից սկսած, դրվեցին www.gyumri.am սայթում: Այսինքն արվեց ամեն ինչ՝ այդ կանխատեսումներով ընտրությունների ընթացքի վրա չազդելու համար:

Արդյունքում, ըստ 47-րդ Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վերջնական արձանագրության, գործող քաղաքապետը հավաքեց 28480 ձայն (75,04%), «Ասպարեզի» կանխատեսած 25200-27885-ի փոխարեն (70,0-71,5%), Լ.Գալստյանը հավաքեց 4752 քվե (12,52%), կանխատեսված 3240-

3705-ի (9-9,5%) փոխարեն: Մ. Զիլֆիմյանը հավաքեց 4712 քվե (12,43%), կանխատեսվել էր 7020-7995 (19,5-20,5%):

Բոլորի օգտին տրված ձայների թիվը կազմեց 37951 ձայն՝ մեր կանխատեսած 36000-39000-ի դեպքում:

Ավագանու անդամ ընտրվելու համար նվազագույն շեմը կանխատեսվել էր 900-950 քվե, իրականում ավագանու անդամների հավաքած քվեներից ամենացածր ցուցանիշը կազմել էր 956 ձայն:

Քաղաքապետի թեկնածուների հավաքած փաստացի քվեների և կանխատեսումների տարբերությունների առնչությամբ հատկանշական է, որ կանխատեսման ժամանակ փորձ էր արվել գնահատել թեկնածուների ընտրագանգվածների և հարցումների ժամանակ նրանց օգտին արտահայտվողների կեղծավորության և ծուլության մակարդակը և, թե՛ ու՞մից ավելի շատ քվե կպակասեր ընտրությունների օրը:

Մյուս կողմից, այդ կանխատեսումները հենվում էին միայն մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ կատարված ուսումնասիրությունների վրա, այնինչ քվեարկությանը նախորդող երկու օրերը, կոնկրետ դեպքում՝ հոկտեմբերի 18-19-ը խիստ էական ազդեցություն ունեցան ընտրողների (հարցումների մասնակիցների) տրամադրությունների վրա:

Քաղաքապետի թեկնածուների հավաքած քվեների և դրանց վերաբերյալ կանխատեսումների 3,5-9%-ի տարբերության մեջ անշուշտ մեծ դեր ունեն նաև քվեարկությունների օրը դիտարկած զանազան օրինախախտումները, չնայած կատարված մեծ բացատրական աշխատանքներին՝ քվեարկության կարգի և քվեարկման նշանի վերաբերյալ ընտրողների սխալ գիտելիքների հետևանքով ստացված շուրջ 2500 անվավեր քվեաթերթիկները, և, իհարկե, նորին գերազանցություն ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ: Գումարեք սրան այն նորահայտ հանգամանքը, որ մարդիկ ընտրելու էին այն տարածքում, որտեղ անձնագրով հաշվառված էին:

Տեղին է հիշել, որ դեռ հոկտեմբերի 15-ին, Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում տված ասուլիսի ժամանակ, քաղաքապետի թեկնածու Մ. Զիլֆիմյանը այն հարցին, թե ինչպես է վերաբերվում մինչ այդ կատարված հետազոտություններին, ակումբի հրապարակած վարկանիշերին (որոնցում թեկնածուն 11,16% ուներ), պատասխանեց. «Այդ թվերն ինձ համար ուղղակի ծիծաղելի են»:

Ոչ նա, ոչ Լ.Գալստյանը, ոչ էլ նախկինում քաղաքապետի հավանական թեկնածուներ համարվողներից որևէ մեկը, անցած 1 տարվա ընթացքում ոչ միայն չփորձեց հանրային կարծիքի ուսումնասիրման պատվերով դիմել որևէ անկախ հետազոտողի, այլև չուզեց իմանալ, թե ի՞նչ մարդկային, սոցիալական խմբեր են կազմում իրենց համակիրները, ովքե՞ր են իրենց մրցակիցների ընտրողները, պատկերավոր ասած՝ ի՞նչ են ուսում, հագնում, շնչում այս մարդիկ, ինչու՞ է, որ նրանք համակրում/հավանում են այդինչին և ոչ իրենց, վերջապես իրեն որպես համայնքի ղեկավար տեսնող մարդկանցից ոչ ոք չփորձեց խորանալ այն հարցի մեջ, թե տեսնես այդ ովքե՞ր են (ընտրելու իրավունք ունեցող մարդկանց 45-60 տոկոսը՝ շուրջ 45-50 հազար ընտրող), որ ոչ մի թեկնածուի չեն հավանում, չեն գնում ընտրության: Գուցե որովհետև իրենց սոցիալ-հոգևոր-քաղաքացիական պահանջներին ինչ-որ չափով բավարարող ծրագրով/առաջարկություններով որևէ մեկին չե՞ն տեսնում: Իսկ իրենք կկարողանայի՞ն այս մեծ խմբին բավարարող կամ գոհացնող ինչ-որ բան առաջարկել որպես թեկնածու..... սա շատ տարողունակ թեմա է:

Փաստն այն է, որ քաղաքապետի թեկնածուները գրեթե կուրորեն գնացին ընտրության, հատկապես՝ տանուլ տվածները: Հավատացին և հալած յուրի տեղ ընդունեցին ամենատարբեր բերաններից ելնող սուտուաբատ խոստումները, քծնախառն հավատարմության երդումներն ու «ցավոք տանիմ»-ները: Լ.Գալստյանն ու Մ.Զիլֆիմյանը տանուլ տվեցին, որովհետև երբեք էլ չփորձեցին համբերատարությամբ ու մինչև վերջ իմանալ, թե ի՞նչ են իրականում մտածում ընտրողներն իրենց մասին: Լ. Գալստյանը ընտրությունից հետո իր պարտությունը փորձեց սրբագրել ընտրացուցակների, ընտրատեղամասերում էլեկտրաէներգիայի անջատման պրոբլեմներով, քվեարկության ընթացքում դիտված զանազան օրինախախտումներով: Մ.Զիլֆիմյանը մի քանի անգամ մերժեց ընտրություններից հետո ասուլիսում մեկնաբանություններով հանդես գալու առաջարկը՝ «տրամադրություն չունեն» արտահայտությամբ:

Վ.Ղուկասյանը 6 տարի առաջ 6 թեկնածուի մրցության մեջ 12755 ձայն հավաքեց, ապա՝ 2 թեկնածուից՝ 20173 քվե: Երեք տարի առաջ՝ 7 թեկնածուից 14355 ձայն ունեցավ: Ի տարբերություն 1996-ին քաղաքապետ ընտրված Մ.Վարդանյանի, կարողացավ իր ընտրագանգվածը աճեցնել և 2002-ին երեք թեկնածուների մեջ հավաքել 28 հազարից ավելի ձայն: Կարևոր է հիշել, որ և 1996-ին և 1999-ին Վ. Ղուկասյանի դեմ էր աշխատում ամբողջ պետական մեքենան՝ մարզային իշխանություններով, պաշտպանության, ներքին գործոց և այլ նախարարություններով, հարկային տեսչությամբ... բոլոր պետական-նոմենկլատուրային համակարգերը անթաքույց մարտնչում էին պետության հաշվարկներից դուրս հայտնված ու պետության թրի տակով անցնել չկամեցող թեկնածուի դեմ, գրեթե այնպես, ինչպես 2002-ի գարնանը ԱԺ 67-րդ ընտրատարածքից պատգամավորի թափուր տեղի համար ընտրության ժամանակ Արթուր Կիրակոսյանի դեմ: Հիմա Վ.Ղուկասյանի հետ շողոքորթ ժպիտով մտերմության ու ախպերության են ձգտում մարդիկ, ովքեր երեք և վեց տարի առաջ 172 տոկոսանոց ինքնավստահությամբ արտաբերում էին զարմանազան մտքեր, որոնք ընդհանրացվում էին մոտավորապես այս իմաստի տակ. -պետությունն ու Վ.Ղուկասյանը անհամատեղելի են, չեն թողնի մնա այդ պաշտոնում:

Պարզվեց, որ գյումրեցիների հավաքական կարծիքն այլ է:

2002-ի ընտրություններից մի քանի ամիս առաջ և քարոզարշավի ընթացքում ՀՀ նախագահի օգտին Վ.Ղուկասյանի արած արտահայտությունները ամենևին էլ այն մտավախությամբ չեն արվել, թե հանկարծ առանց այդ դիրքորոշման գործող քաղաքապետը չի վերընտրվի: Ավելին, ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ միայն առանց այդօրինակ հայտարարությունների, այլև քարոզարշավի միջոցառումների ու ծախսերի միայն 20-30-տոկոսի կատարման դեպքում էլ Վ.Ղուկասյանը կվերընտրվեր նկատելի առավելությամբ:

Սա մեզ համար պարզ էր դեռ մինչև 2002-ի օգոստոսը: Պարզապես, չկամենալով մեղադրվել հասարակական կարծիքի վրա կոշտ ճնշում գործադրելու կամ որպես ժուռնալիստական կազմակերպություն՝ քաղաքականությամբ կլանվելու մեջ, մինչև ընտրությունները լուռ եղանք, և այս վերլուծությունը ներկայացնում ենք հիմա միայն:

Ավելին, իրադրությունը հիշեցնում է մոսկովյան քաղաքապետի հետ կապված իրադրությունը. նրան քննադատում են, կենտրոնական իշխանությունները չեն հավանում, անուղակի և ուղղակի մեղադրում են զանազան մեղքերի և մեքենայությունների մեջ, բայց մոսկովացիները շարունակ վերընտրում են նրան՝ ձայների ճնշող գերազանցությամբ: Ճիշտ է, մասշտաբները բոլորովին տարբեր են, բայց Գյումրիի քաղաքապետի վարկանիշի և հասարակական հեղինակության հետ կապված իրավիճակը հանգիստ խղճով կարելի է կոչել «Լուժկովի սինդրոմ»:

Եթե արտակարգ իրավիճակ կամ հրաշք չլինի, ու Վ. Ղուկասյանը առաջադրվի 2005-ի ՏԻՄ ընտրություններում որպես Գյումրու քաղաքապետի թեկնածու, գործնականում անհնարին պիտի լինի նրա պարտությունը:

Ասպարեզ Լրատվական Կենտրոն

**2002 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՄՐՈՒ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾ ՔԿԵՆՆԵՐԸ
ԸՍՏ 47 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ**

ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ ընդամենը 20 տեղամաս, 35 280 ընտրող	47	47	47	47	47	47	47	47	47	47	47
	1	2	3	4	5	6	7	8	9	10	12
	Արվ դար	27 մանկ	11-րդ դար	գՍԻ	37-րդ դար	26 մանկ	18-րդ մանկ	40-րդ դար	42-րդ դար	43-րդ դար	23-րդ դար
Գալստյան Լևոն	98	72	55	85	97	83	90	76	50	23	14
Զիլֆինյան Մարտին	55	43	42	94	84	85	104	92	40	59	12
Ղուկասյան Վարդան	422	464	488	450	483	470	464	570	305	265	190
Ընտրողների թիվը ցուցակով	1929	1935	1875	2075	1984	1980	1941	2132	1363	1174	640

ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ ընդամենը 20 տեղամաս, 35 280 ընտրող	47	47	47	47	47	47	47	47	47	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Ի ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ	
	13	14	15	16	17	49	50	56	64	Չայն	%
	Հոյս մնկ	38 դար	Օլիմ մղա	8 մնկ	Բալա տ	1-ին դար	6-րդ դար	2 մնկ	Բկգ գրս		
Գալստյան Լևոն	73	18	64	57	55	68	86	87	17	1268	10,89
Զիլֆինյան Մարտին	51	35	71	60	61	51	52	105	22	1218	10,46
Ղուկասյան Վարդան	435	257	364	471	463	974	948	430	242	9155	78,64
<i>Թեկնածուների օգտին՝</i>	559	310	499	588	579	1093	1086	622	281	11641	99,99
Ընտրողների թիվը ցուցակով	198 1	193 6	186 4	194 2	159 1	196 3	203 3	191 3	102 5	35 280	32,99

ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ- ընդամենը 23 տեղամաս, 42 706 ընտրող	47	47	47	47	47	47	47	47	47	47	47	47
	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29
	Հայ- ուրս	15 դար	5 մանկ	17 դար	Բնկ ՓԲԸ	26 գշ դար	Պոլիտ խն	20 դար	10 մանկ	31 դար	21 մանկ	29 դար
Գալստյան Լևոն	52	76	61	64	72	33	65	68	41	39	36	39
Զիլֆինյան Մարտին	60	39	51	48	29	26	54	43	35	56	96	40
Ղուկասյան Վարդան	397	538	537	445	415	355	433	455	452	340	330	518
Ընտրողների թիվը ցուցակով	1925	1846	1997	1957	2110	1856	1908	1873	1873	1875	1721	1985

ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ- ընդամենը 23 տեղամաս, 42 706 ընտրող	47 30	47 31	47 32	47 33	47 34	47 35	47 36	47 37	47 47	47 53	47 63	ԸՆԴԱՄԵՆԸ՝ II ՏԱՐԱԾՔ	
	33 դպ	Հայր րգ	ՀՊՃՀ	30 դպ	Ար գած	2 դպր	Ար գած	14 դպր	Տիկ թտ	Տրո՞ղ րկ	24 դպր	Չայն	%
Գալստյան Լևոն	59	78	58	89	34	90	64	105	135	18	113	1489	11,64
Զիլֆիմյան Մարտին	40	50	50	96	193	93	54	145	92	20	80	1490	11,64
Ղուկասյան Վարդան	442	450	329	516	281	355	483	371	579	261	530	9812	76,71
<i>Թեկնածուների օգտին՝</i>	541	578	437	701	508	538	601	621	806	299	723	12791	99,99
Ընտրողների թիվը ցուցակով	19 70	20 74	17 11	19 74	14 15	16 86	17 96	18 21	20 07	11 38	21 88	42706	29,95

ԵՐՐՈՐԴ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ- ընդամենը 22 տեղամաս, 39 173 ընտրող	47 11	47 38	47 39	47 40	47 41	47 42	47 43	47 44	47 45	47 46	47 48	47 51
	3 երժ դպր	22 դպր	22 դպր	16 մանկ	26 դպր	27 դպր	9-րդ գրո	Երկթե լայր	10 դպր	4-րդ մանկ	25 դպր	13 դպր
Գալստյան Լևոն	85	101	105	94	93	125	117	131	104	248	101	109
Զիլֆիմյան Մարտին	67	88	76	92	93	104	49	109	119	123	100	73
Ղուկասյան Վարդան	596	524	497	515	668	538	556	611	492	474	443	296
Ընտրողների թիվը ցուցակով	1929	1952	2081	1975	2034	2015	1970	1985	1973	1978	1989	1654

ԵՐՐՈՐԴ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ- ընդամենը 22 տեղամաս, 39 173 ընտրող	47 52	47 54	47 55	47 57	47 58	47 59	47 60	47 61	47 62	47 65	ԸՆԴԱՄԵՆԸ՝ III ՏԱՐԱԾՔ	
	5-րդ դպր	Ջնգ մնկ	Մնկ ՍՍ	Չյո մրգ	34 դպր	Ավտոճ շրն	12 մնկ	18 դպր	44 դպր	13 դպր	Չայն	%
Գալստյան Լևոն	90	77	38	45	49	80	60	56	32	55	1995	14,7 5
Զիլֆիմյան Մարտին	155	183	203	54	41	79	55	85	21	42	2011	14,8 7
Ղուկասյան Վարդան	299	238	271	442	418	421	444	429	65	276	9513	70,3 6
<i>Թեկնածուների օգտին</i>	544	498	512	541	508	580	559	570	118	373	13519	99,9 8
Ընտրողների թիվը ցուցակով	1654	1582	1675	1898	1879	1578	1850	1863	312	1347	39 173	34,5 1

ԱՄՓՈՓԻՉ՝ ԳՅՈՒՄՐԻ

ԳՅՈՒՄՐԻ՝ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՎ	ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ		ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ		ԵՐՐՈՐԴ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ		ԸՆԴԱՄԵՆԸ ԹՎՈՎ՝ 65 ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱ- ՍԵՐԻՑ	
	ՁԱՅՆ	%%%	ՁԱՅՆ	%%%	ՁԱՅՆ	%%%	ՁԱՅՆ	%%%
Գալստյան Լևոն	1268	10,89	1489	11,64	1995	14,75	4 752	12,52
Զիլֆիմյան Մարտին	1218	10,46	1490	11,64	2011	14,87	4 719	12,43
Դուկասյան Վարդան	9155	78,64	9812	76,71	9513	70,36	28 480	75,04
<i>Թեկնածուների օգտին</i>	11641	99,99	12791	99,99	13519	99,98	37 951	99,99
Ընտրողների թիվը ցուցակով	35 280		42 706		39 173		117 159	32,39

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանյան ժողովրդավարությունը այսօր հայտնվել է խորը ճգնաժամում: Դրա վառ վկայություններից մեկն էլ հոկտեմբերի 20-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն էր, որն անցավ հասարակության և կուսակցությունների գրեթե խաղից դուրս հայտնված վիճակում: Իսկ ժողովրդավարության և ազատության պահապանի դերը պատկանում է հասարակությանը և հատկապես նրա գաղափարական իշխանություններին ընդդիմադիր տրամադրված, զանգվածներին, ասել է, թե՛ հատկապես կուսակցություններին:

Այս հողվածում ավելորդ են համարում նույնիսկ անդրադառնալ և մանրամասնությամբ բացատրել, թե ինչպիսի ողբերգական վիճակում կհայտնվի մեր երկիրը, եթե փորձի հրաժարվել ժողովրդավարությունից և ազատ հասարակություն կառուցելու մտադրությունից: Կարճ ասած, դա մեզ համար մի իսկական ինքնասպանություն է: Ցավոք հիմա, այն էլ ՀՀ նախագահական ընտրությունների նախաշեմին, այդ սպառնալիքը կախված է մեր հասարակության զլխավերևում... Այնուամենայնիվ, կարծում են «Ասպարեզի» ընթերցողները նման զգուշացման կարիքը չունեն: Ուստի հիմա ուզում են անդրադառնալ ժողովրդավարության կարևորագույն պահապաններից մեկի՝ կուսակցությունների և մասնավորապես նրանց կառույցների առջև կանգնած հիմնահարցերին, փորձելով նաև մատնանշել առկա վիճակից դուրս գալու ելքերը:

Անտարակույս, Հայաստանում վաղուց հասունացել է կուսակցությունների դերի, գործունեության և կառուցվածքային առունով զարգացման խնդիրներին նվիրված քննարկումների ծավալման անհրաժեշտությունը, ինչպես կուսակցական ու պետական մարմիններում, այնպես էլ բնակչության լայն զանգվածների շրջանում: Ավաղ, այս հարցերի շուրջ որևէ լուրջ հրապարակման, առավել ևս խորքային քննարկումների, զոնե ինձ, առայժմ բախտ չի վիճակվել հանդիպել կամ մասնակցել: Անշուշտ այս հարցերը արծարծվում են համեմատաբար ազդեցիկ կուսակցությունների ներսում, սակայն դրանք հիմնականում տեղի են ունենում խոսք ու զրույցի մակարդակով: Բնականաբար, անտեսել չի կարելի այն հիմնական պատճառաբանությունը, թե տիրող քաղաքական, բարոյահոգեբանական և սոցիալ-տնտեսական իրավիճակը տրամադրող է: Սակայն կա ևս մեկ պարզ ճշմարտություն, որն ասում է՝ եթե իրոք ուզում ենք պայքարել կլանների, զինված և քրեածին, հեղափոխական և նմանատիպ այլ ուժերի բազմացման ու զարգացման գործընթացների դեմ՝ հանուն մեր լավ ապագայի, ապա առաջնահերթ խնդիր պետք է համարենք ժողովրդավարական կառույցների, տվյալ դեպքում կուսակցությունների դերի կտրուկ բարձրացումը:

Այսօր արդեն Հայաստանում հիմնադրված են այն մի շարք ժողովրդավարական կուսակցություններ, որոնք լուրջ հայտ են ներկայացրել դառնալու քաղաքական դաշտի հիմնական դերակատարները: Սակայն մեր այսօրվա կուսակցությունները պետք է շուտափույթ կարողանան լուծել մի շարք անհետաձգելի խնդիրներ: Այդ խնդիրներից մեկը գաղափարների և ծրագրերի մշակման ու հղկման, դրանք հասարակության լայն խավերին մատուցելու առավել ոյուրին ճանապարհներ հայթայթող կենտրոնների ստեղծումն է: Այդ նույն արևմուտքում, որտեղից մեր շատ ու շատ պետական այրեր և քաղաքական գործիչներ սիրում են օրինակներ բերել, պնդում են, որ հիմնական գաղափարները ոչինչ չարժեն առանց կարևորագույն բաղադրամասերի: Կարծում են, այս մեկը զոնե հաստատ ուշադրության արժանի միտք է:

Կուսակցությունների զարգացմանը կնպաստի նաև փոխադարձ հանդուրժողականության մթնոլորտը: Այստեղ ուզում են ընդգծել մի պարզ ճշմարտություն ևս. երբ նույնիսկ կարևորագույն հարցերում ընդհանուր հայտարարի չեն գալիս, դա բնավ միմյանց ոչնչացնելու գործողություններ ծրագրելու և իրականացնելու պատճառ կամ հիմք չի դառնում (սա ի գիտություն հատկապես հայկական իշխանությունների...):

Սակայն...

Քաղաքական դաշտի և հասարակական կարծիքի ձևավորման հիմնական դերակատար դառնալու համար թիվ մեկ հարցը համարվում է այն, թե կուսակցությունը որքանով է զանգվածային, որքանով է իր կառույցներով տարածված և արմատավորված երկրով մեկ: Իսկ որ այս հարցում մեր գրեթե բոլոր կուսակցությունները կաղում են, կարծում են, ոչ մեկի համար գաղտնիք չէ: Ավելին, որպես կանոն այսօր շրջանային կամ մարզային կուսակցական կառույցները ավելի շատ համարվում են ներկայացուցչական, այս կամ այն տեխնիկական հանձնարարությունը, այս կամ այն չափով կատարող մարմիններ, կոպիտ ձևակերպմամբ՝ «գործիքներ սևագործ աշխատանքների համար»: Ամենևին էլ այն կարծիքին չեն, թե բոլոր կուսակցական լիդերներին ձեռնտու են նմանատիպ կարգավիճակներով կուսակցական կառույցները: Դիտարկումները ևս ապացուցում են, որ այս կարգավիճակին համակերպվում են հիմնականում նոր-նոր

հիմնվող, թույլ կամ համեմատաբար ազդեցիկ ու շահագրգիռ անձերից զուրկ տեղական կառույցները: Այսպիսի դեպքերում նույնիսկ պատկերը սկսում է շուռ գալ, երբ կուսակցական կառույցների թվակազմը աճում է: Շատ դեպքերում, երբ տեղերում որևէ կուսակցության կառույց սկսում է ապրել աճի և զարգացման գործընթաց, միաժամանակ ծնվում են ունեցած կարգավիճակի հետ չհամաձայնելու տրամադրություններ: Լավագույն դեպքում, եղածն էլ սկսում է կազմալուծվել:

Ժողովրդավարական երկրներում կուսակցական շինարարության բնագավառում կոպիտ սխալ է համարվում, երբ կուսակցության կառուցումը կատարվում է «վերևից՝ ներքև» սկզբունքով, իսկ մեր երկրում հիմնական սխալներից մեկը, իմ կարծիքով, այն է, երբ չափից դուրս կարևորվում է անհատականությունների դերը:

Վերջին շրջանում բազմիցս շահարկվում է այն, թե մայրաքաղաքից դուրս քաղաքական գործիչներ չկան: Այստեղ անշուշտ ճշմարտության մասին կա: Սակայն միաժամանակ, հարկավոր է գիտակցել, որ այնքան ժամանակ, քանի դեռ քաղաքական դաշտի սահմանները կհամընկնեն ճիշտ մայրաքաղաքի կամ «պառլամենտ» կոչվածի սահմանների հետ, դժվար թե Հայաստանում նոր քաղաքական գործիչներ ի հայտ գան: Ուրեմն, հանրապետության ամբողջ տարածքով մեկ քաղաքական դաշտ ձևավորելու համար առաջնահերթ պայման պետք է համարվի կուսակցական շրջանային կառույցների ձևավորմանը նպաստող պայմանների ստեղծումը: Նման պայմանները պայմանականորեն կարելի է բաժանել 2 խմբի, որոնցից մեկը բաղկացած է համապատասխան օրենքներից, որոնք ցավոք, բացակայում են մեր երկրում: Երկրորդը բաղկացած է ավանդույթներից, ներկուսակցական գործելակերպից ու սկզբունքներից:

Այսօրվա օրենքներով, կուսակցական տեղական կառույցներին (այն էլ ոչ բոլոր) տրված է գործելու միայն մեկ բնագավառ՝ ընտրությունից-ընտրություն ընտրական հանձնաժողովներ ձևավորել: Սակայն պատկերն ամենևին այլ կլիներ, եթե տեղական ինքնակառավարման մարմինների մեծ մասը ձևավորվեր համայնքների կողմից ուղղակի ընտրությունների ճանապարհով, ավելին, ավագանին ընտրվեր նաև համամասնական ճանապարհով, լինեին մարզային խորհուրդներ, կրկին (գոնե կիսով չափ) ընտրական համամասնական ճանապարհով ձևավորված: Ցավոք, Հայաստանում չկա նաև ավանդույթ՝ հաշվի նստել մայրաքաղաքից դուրս առկա քաղաքական տեսակետների հետ: Իսկ տեղական իշխանությունների համար կուսակցություններն իրենց տեսակետների և վերաբերմունքների հետ միասին համարվում են ավելորդ գլխացավանքի նման մի բան: Կուսակցությունների ներսում նույնպես չկան շարքերի տեսակետները, նրանց պատկերացումները հաշվի առնելու ավանդույթներ: Կուսակցությունների կանոնադրություններում բացակայում են տեղական կառույցների կարծիքները կարևորագույն որոշումների ընդունման ժամանակ հաշվի առնելու հստակ մեխանիզմները:

Գործող կուսակցական կանոնադրություններով փաստորեն բացառվում է, որ կուսակցությունների ղեկավար մարմիններում ընտրվեն շրջանային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Իսկ պատկերն այլ կլիներ, եթե կանոնադրորեն, գոնե ընտրական համամասնական ցուցակների վերին մասում պարտադիր դրույթ համարվեր շրջանային կառույցներից առաջադրվածների առկայությունը, կամ կուսակցական ղեկավար մարմիններում ընդգրկվեին նաև տեղական կառույցներում ընտրված և նրանցից ներկայացված մարդիկ:

Կուսակցական շրջանային կառույցների ձևավորման և զարգացման վրա ազդում է նաև այն իրողությունը, թե ինչ վիճակում է գտնվում սովյալ կուսակցության վերին և ներքին օղակների շփման և տեղեկատվության փոխանակման վիճակը:

Բնականաբար, վերը շարադրվածով չեն սահմանափակվում այն բոլոր հարցերը, որոնք լուծելուց հետո միայն կունենանք զանգվածային և ազդեցիկ կուսակցություններ: Սրանք ընդամենը իմ պատկերացումներն էին մի քանի հարցերի մասին, որոնց հանգել եմ ոչ միայն մեր, այլև մի շարք այլ կուսակցական կառույցների ներկայացուցիչների հետ հաճախակի շփման արդյունքում:

Սակայն, եթե անգամ կուսակցությունները ենթարկվեն արմատական բարեփոխումների, նրանց քանակն էլ տասնապատիկ անգամ կրճատվի, ինչն այնքան շատ ցանկանում ենք բոլորս, միևնույն է՝ առանց հասարակության լայն խավերի անմիջական մասնակցության որևէ քաղաքական ինստիտուտ՝ առավելևս կուսակցություն, չի կարողանալու լիիրավ իրականացնել իր վրա դրված պարտականությունները: Եվ առհասարակ, կարծում եմ, եկել է ժամանակը սթափվելու և գիտակցելու, որ չկա և չի կարող լինել որևէ նորմալ երկիր ու հասարակարգ, ուր հենց հասարակությունը այսչափ ինքնամեկուսացած, սեփական երկրի կառավարումից, անցուդարձից դուրս մղված լինի, այսչափ անտարբեր՝ սեփական ձակատագրի և ապագայի հանդեպ:

Վահան Թումայան ԱԺԿ-Գյումրի

Ընտրություններից մի քանի օր հետո ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում մամուլի ասուլիս հրավիրեց Գյումրու քաղաքապետի թեկնածու Լյովա Գալստյանը: Ասուլիսի ժամանակ նա խոսեց շուրջ երեսուն ընտրատարածքներում իր թիմի դիտարկած ընտրակեղծիքների ու ընտրակաշառքի մասին: Նաև այն, որ կոպիտ խախտումների համար Լ. Գալստյանը դիմում-բողոք է ներկայացրել թիվ 47 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ երեսույոթ տեղամասերում ընտրությունների արդյունքները անվավեր հայտարարելու մասին: Թեկնածուի նախընտրական շտաբի պետ Լևոն Խաչատրյանի խոսքերով, իրենք ունեն հիմնավոր պատճառներ, իսկ Լյովա Գալստյանը առանց կոնկրետ փաստարկների պատմեց. - Ընտրությունների օրը ակտիվ աշխատեցին քաղաքապետարանի ու մարզպետարանի բոլոր կառույցները, քաղաք հրավիրվեցին վարձկաններ, պետական կառույցների մեծապատիվ մուրացկաններ և հանդես եկան գործող քաղաքապետի թեկնածությունը պաշտպանող ելույթներով:

Քաղաքի մի շարք թաղամասերում ընտրությունների օրը երիտասարդների կուտակումները Լյովա Գալստյանը բացատրեց թմրանյութերի տարածմամբ: «Ընտրությունների օրը գործեց թիվ 1 ընտրողը՝ ընտրակաշառքը: Մենք լավ գիտենք՝ ում բնակարաններում են բաժանվել կաշառքները, ինչպես է բաժանվել ավտոբուսների մեջ, տներում», - ասուլիսի ժամանակ հայտարարեց Լ. Գալստյանը:

Թեև ընտրություններից առաջ Լյովա Գալստյանը համոզված էր, որ արդար ընտրություններ կանցնեն և ժողովուրդը մեկ օրվա կուշտ փորը չի փոխի երեք տարվա սոված փորի հետ, այնուամենայնիվ ընտրություններից հետո նա իր համար շատ բան պարզեց, որ. «... քաղաքում կան մի քանի հազար վատ տեսնող կանայք և ծերունիներ, որոնց ուղեկցում էին մինչև քվեախցիկը: Պարզվեց, որ կան հազարավոր միայնակ ծերունիներ, որոնց ավտոբուսներով տանում էին քաղաքի տարբեր ընտրատեղամասեր»:

Չնայած թեկնածուն չէր ցանկանա, որ որևէ գյումրեցի կրկնակի ընտրություն կատարելու համար դատվեր, բայց դա մյուսների համար դաս կլիներ: Լյովա Գալստյանի համոզմամբ, ընտրացուցակների անկատարությունը թույլ տվեց շատերին ոչ միայն կրկնակի ընտրություն կատարել, այլև ընտրացուցակների և ընտրատեղամասերի վերջին օրերի փոփոխությունները մոլորության մեջ գցեցին շատերին, և, չունենալով համապատասխան գումար՝ տրանսպորտի համար, քաղաքացիներից ոմանք նույնիսկ չմասնակցեցին ընտրություններին:

Նշելով մի շարք թերություններ՝ Լյովա Գալստյանը եզրակացրեց. «Այսինքն, մեզ մոտ ընտրություններն անցան՝ արհամարհելով ընտրական օրենսգիրքը, Ազգային ժողովը և այլն: Սա ոչ թե ընտրություն էր, այլ դիմակահանդես, որը շարունակվելու է նաև նախագահական ընտրություններում»: Չնայած այս ամենին, թեկնածուն նշեց, որ իրենք արդարություն գտան՝ դա չորս հազար ընտրողների ձայներն են: Իսկ ընտրված թեկնածուն, ըստ Լ. Գալստյանի, գերծ չի մնացել ընտրակեղծիքներից ու ընտրակաշառքից: «Նման ձևով՝ ընտրակաշառքով, ընտրակեղծիքով, մարդկանց ահաբեկելով, վախեցնելով՝ ես չէի համաձայնի նույնիսկ հանրապետության նախագահ լինել: Նման պաշտոն ինձ պետք չի», - հայտարարեց Գալստյանը և հույս հայտնեց, որ դատական համակարգը այս խնդիրներին ճիշտ լուծում կտա:

Ասուլիսի ժամանակ խոսվեց նաև նախագահական ընտրություններում սպասվելիք ընտրակեղծիքների մասին, որոնք պարզից էլ պարզ են դարձել Լ. Գալստյանի նախընտրական շտաբին: Գուցե այդ ընտրություններում նրանք աչք կփակեն, բայց հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած ընտրություններում կատարված ընտրակեղծիքների մասին նրանք չեն ցանկանում լռել: Լյովա Գալստյանը դիմում-բողոքը ներկայացրել է 47 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ հետևյալ բովանդակությամբ. շատ տեղամասերի հասցեավորումը չի համապատասխանում ընտրացուցակներում եղած հասցեներին, մի շարք ընտրատեղամասերում ընտրողների թիվը գերազանցում է 2000-ը, իսկ թվով 15 տեղամասում քվեարկության օրը հանգցվել է լույսը:

Լյովա Գալստյանի նախընտրական շտաբի պետ Լևոն Խաչատրյանի խոսքերով, այս ընտրությունների յուրահատկությունը նրանում էր, որ ամեն կեղծիք տեղափոխվեց ընտրատեղամասերից դուրս, և այս ընտրությունները միջազգային դիտորդների աչքին արդար ու թափանցիկ թվացին:

Ասուլիսի ժամանակ խոսք եղավ նաև ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբի նախընտրական կանխատեսումների մասին, որոնք բավականաչափ մոտ էին Գյումրիում ՏԻՄ ընտրություններում ստացված արդյունքներին: Այդ կանխատեսումների մեջ հասկանալի կերպով չէին արտացոլված ընտրակեղծիքները,

ստացված արդյունքները Վ. Ղուկասյանի դեպքում 3.5-5 տոկոսով էին տարբերվում կանխատեսումից, մոտ 2-2.5 տոկոսով տարբեր էր Լ. Գալստյանի ցուցանիշը և 6.5-8 տոկոսով՝ Մ. Ջիլֆինյանինը: Ասուլիսի ժամանակ Լ.Գալստյանը անհավանական համարեց, թե իր ներկայացրած օրինախախտումները հիշատակված տատանումների չափով են, դրանք իր կարծիքով շատ ավելի մեծ ազդեցիկություն ունեին, և քաղաքապետի թեկնածուների պաշտոնապես հավաքած քվեները իրականում շատ ավելի անհամապատասխան էին նրանց իրական վարկանիշերին, քան վերոնշյալ 4-5 տոկոսը:

Անդրդվելի 47 ընտրատարածքային հանձնաժողովը

47 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, որին և վերապահված էր Գյումրիում անցկացնել ընտրությունները, հոկտեմբերի 22-ին անցկացրեց իր հերթական նիստը: Հանձնաժողովը ստացել էր դիմում-բողոքներ ավագանու անդամության թեկնածուներ Ռուստամ Սարգսյանից, Դավիթ Աբաջյանից և քաղաքապետի թեկնածու Լյովա Գալստյանից: Որքան և տարօրինակ է, մերժվեցին բոլոր դիմում-բողոքները, որոնցում ի թիվս այլոց բերված էին նաև բավականաչափ արդարացի պահանջներ:

ՆԳ մեն-մի հատիկ տեղեկանքով գրանցված անհայտ թեկնածուն

Ավագանու անդամության թեկնածու Ռուստամ Սարգսյանը դիմումում բողոքում էր այն հանգամանքի դեմ, որ ինքը չի եղել ընդգրկված քվեաթերթիկներում, և դրա փոխարեն դրանցում ներկայացված է եղել մարդ, որը ոչ մի հիմքով չէր կարող ավագանու անդամության թեկնածու համարվել: Քվեաթերթիկներում եղել է **Ռուստոմ** անունով թեկնածու և չի եղել **Ռուստամը**: Ըստ Ռուստամ Սարգսյանի, սա թյուրիմացության մեջ է գցել ընտրողներին, բայց չգիտես ինչու այս մասին նա բողոքում է քվեարկությունից 2 օր անց: Հանձնաժողովը, բողոքարկվող այս հանգամանքը որակեց որպես անճշտություն և վրիպակ (6 տառից բաղկացած մեկ անունի մեջ 2 տառախախտ), բայց անճշտության վերաբերյալ Ռուստամ Սարգսյանի դիմումը որոշեց մերժել, քանի որ ցուցակում **Ռուստոմ** անունն ընդգրկելու համար հիմք է հանդիսացել ՆԳ անձնագրային վարչությունից բերված տեղեկանքը, որում նշված է եղել հենց **Ռուստոմ** անունը: Չնայած թիվ 47 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Է. Բաղդամյանի կարծիքով պահանջը տեղին էր և արդարացված, հանձնաժողովը մերժումը թողեց անփոփոխ, փոխարենը խորհուրդ տրվեց դիմել դատարան:

Հանձնաժողովը կամ որևէ մեկը այդպես էլ չկարողացավ բացատրել, թե բացի հիշատակված տեղեկանքը, **Ռուստոմ** անունը կրող ուրիշ ի՞նչ փաստաթուղթ կար հանձնաժողովի ձեռքի տակ, որ բավարար եղավ այդ անունով ավագանու անդամության թեկնածու գրանցելու համար....

Ուշացած բողոք, թե՞ դիտավորյալ ուշացում

Հանձնաժողովին ներկայացված երկրորդ դիմում-բողոքով ավագանու անդամության թեկնածու Դավիթ Աբաջյանը պնդում էր, որ իր վստահված անձինք արձանագրել են փաստեր, որոնք էապես ազդել են ընտրությունների արդյունքների վրա: Դիմումով խնդրում էր վերանայել ավագանու առաջին ընտրատարածքի արդյունքները: Հանձնաժողովը դիմումը մերժեց, քանի որ, ըստ 47-րդ ընտրատարածքային հանձնաժողովի նախագահի, Դավիթ Աբաջյանը դիմումը ներկայացրել էր օրենքով սահմանված ժամկետից ուշ՝ ժամը 14:40-ին, իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է, որ քվեարկության արդյունքների վերաբերյալ տեղամասային հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել քվեարկության հաջորդ օրը մինչև ժամը 14:00: Նիստին ներկա Դավիթ Աբաջյանը ընդվզեց, ասելով, թե հենց նախագահը դիմումն իրենից ընդունելիս դիտավորյալ ձգձգեց այնքան, որ ժամը 14-ն անցնի: Հանձնաժողովի մերժումը մնաց անփոփոխ:

Ավագանու անդամության թեկնածուների վերոհիշյալ բողոքարկումներն ավելի հասկանալի կլինեն, եթե ավելացնենք, որ դրանք Գյումրիի տարբեր ընտրատարածքներում վեցերորդ տեղերը գրաված թեկնածուներն էին. Ռուստամ Սարգսյանի հավաքած 1318 քվեն ընդամենը 25-ով էր զիջում 2-րդ անգամ Գյումրու ավագանու անդամ ընտրված, 5-րդ տեղն զվաղեցրած Վահան Գասպարյանի քվեներին և 328 քվեով առաջ էր 7-րդ տեղն զբաղեցրած թեկնածուից, Իսկ Դավիթ Աբաջյանի հավաքած 945 ձայնով ընդամենը 11-ով էր զիջում կրկին վերընտրված, և այդ ընտրատարածքում 5-րդ տեղն զբաղեցրած Սերգեյ Հակոբյանին և շուրջ 74 ձայնով գերազանցում էր 7-րդ տեղը գրաված թեկնածուին:

Տեղական ընդդիմության ներկայացուցչի բողոքը

Գյումրու քաղաքապետի թեկնածու Լյովա Գալստյանն իր դիմում-բողոքում նշել էր, որ 2002 թ. հոկտեմբերի 20-ի ընտրությունները անցել են խախտումներով, որոնք շարադրված էին առանձին: ՀՀ ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածի 6-րդ կետում ասվում է, որ ընտրական տեղամասն ընդգրկում է ոչ ավելի, քան 2000 ընտրող: Լ. Գալստյանը դիմումի առաջին կետում նշել էր, որ մի շարք նշված տեղամասերում ընդգրկված է եղել 2000-ից ավել ընտրող, ինչը հակասում է օրենքի տառին: Այս մասով հանձնաժողովը բացատրեց, թե այդ խախտումը էական ազդեցություն չի ունեցել ընտրությունների արդյունքների վրա, քանի որ տեղամասերում քվեարկել է ոչ ավելի, քան 1000 ընտրող: Բացի այդ, ընտրատեղամասերից բողոքներ չեն ստացվել այն մասին, որ ընտրողը գրկվել է ընտրական իրավունքից:

Անշուշտ, այս տրամաբանությամբ շարժվելիս, կարելի կլիներ ցուցակներում ընդգրկել 5000-ական ընտրող: Անկախ հանձնաժողովի բացատրություններից, տարրական կրթությամբ մարդուն էլ հասկանալի է, որ գործող օրենքով, ընտրատեղամասի ցուցակներում ընտրողների թվի գերազանցում 2000-ից չի թույլատրվում: Եվ կապ չունի, թե ով է դա արձանագրում թեկնածու՞ն, վստահված ա՞նձը, դիտորդը՞, թե՞ մանկապարտեզի դաստիարակչուհին:

Իր բողոքի երկրորդ կետով Լ.Գալստյանը բերել է փաստեր, ըստ որոնց, Գյումրիի մի շարք ընտրատեղամասեր քվեարկության ընթացքում և քվեաթերթիկների հաշվման ընթացքում հոսանքազրկվել են: Հանձնաժողովը դիմում-բողոքի այս կետը ևս մերժեց, քանի որ նման փաստի վերաբերյալ ոչ մի տեղամասային հանձնաժողովից, ընտրատեղամասերում ներկա եղած վստահված անձանցից հոսանքազրկումը որպես օրինախախտում կամ ընտրությունների արդյունքների վրա ազդած գործոն հիշատակող արձանագրություն չի եղել:

Երրորդ կետում Լ.Գալստյանը նշել էր այն մասին, որ ընտրացուցակներում ընդգրկված քաղաքացիների հասցեները չեն համապատասխանել տվյալ տեղամասի հասցեների հետ: Այս կետը ևս հանձնաժողովը մերժեց, մեկնաբանելով, որ նախատեսված է հիմնական փաստաթուղթ ընդունել քվեացուցակը:

47 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղար Գևորգ Ղուկասյանն առաջարկեց հաջորդ նիստում քննարկել ընտրացուցակներ կազմողների պատասխանատվության հարցը, որն, ըստ օրենքի 133 հոդվածի, կրում է համայնքի ղեկավարը: ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն, համայնքի ղեկավարը ընտրացուցակները կազմելու կարգը խախտելու համար պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև մեկ տարի ժամկետով, որոշակի պաշտոնները վարելուց կամ որոշակի գործունեություն ծավալելուց զրկելով երկու տարի ժամկետով, կամ տուգանվում նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում

Այսպիսով, հոկտեմբերի 29-ին Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում սկսվեց Գյումրիի քաղաքապետի թեկնածու, «Հայրենիք և պատիվ» կուսակցության փոխնախագահ Լևոն Գալստյանի քաղաքացիական հայցի քննությունը՝ ընդդեմ թիվ 47 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի: Հայցվորը իր հայցում գրեթե նույնությամբ արտացոլել էր 47 ԸԸՀ-ին ներկայացրած իր բողոքները և պահանջում էր անվավեր ճանաչել հանձնաժողովի՝ իր բողոքը մերժող որոշումը և անվավեր ճանաչել Գյումրիի թիվ 37 ընտրատեղամասերում կայացած քվեարկությունների արդյունքները:

Դատական առաջին նիստը դեռ չսկսված ավարտվեց, որովհետև հայցվոր կողմը բացարկ հայտարարեց գործը քննող նոր նշանակված դատավոր Վահե Խալաթյանին: Իսկ բացարկ հայտնելու հիմնավորումն այն էր, որ մինչև դատական նիստի սկսվելը հայտնի էր դարձել, թե դատավոր Խալաթյանը նախկինում աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմում: Ըստ հայցվորի, այդ փաստը կարող էր խոչընդոտել արդար քննությանը: «Մանավանդ, որ ընտրություններից երկու օր առաջ նախագահը կանչել էր Վ. Ղուկասյանին և նրա հետ 2003 թ. իրականացվելիք շինարարության ծավալներն էր քննարկել: Փաստորեն նախագահին իր այդ քայլով արդեն ուղղորդել էր կայանալիք ընտրությունները՝ դրանով քաղաքապետին վերընտրվելու երաշխիքներ, իսկ իշխանական լծակներին՝ Վ. Ղուկասյանի օգտին աշխատելու հստակ հրահանգ տալով»,- բացարկի իր միջնորդությունը այսպես հիմնավորեց Լ. Գալստյանը: Դատական առաջին նիստն ընդմիջվեց մինչև նոյեմբերի 1-ը: Նոյեմբերի 1-ին վերսկսված դատական նիստի ժամանակ պարզ դարձավ, որ դատարանը մերժել է հայցվորի ներկայացրած բացարկը: Սկսված դատաքննության շուրջ 2 ժամ տևած նիստի վերջում դատարանը մերժեց թեկնածու Լյովա Գալստյանի հայցը: Ըստ Վահե Խալաթյանի կայացրած վճռի, հայցվոր կողմի բերած փաստարկները էապես չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա, հետևաբար և հայցը ենթակա է մերժման: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտավ հրապարակման պահից և այն բողոքարկման ենթակա չէ:

Ասպարեզ Լրատվական Կենտրոն

ԿԵՑՑԵՆ ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՈՒՆՆԵՐԸ...ՈՒՌԱ՝

Ըստ Շիրակի մարզպետարանի ՏԻՄ վարչության պետ

Գ. Եղիազարյանի զեկույցի նյութերի

Հոկտեմբերի 20-ին Հայաստանում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն արժանացան դիտորդների բարձր գնահատականին: Հետո ինչ, որ Գյումրիի մեկ տասնյակից ավելի ընտրատեղամասեր հոսանքագրվեցին ընտրությունների պիկ ժամին, կամ շատ ընտրողներ իրենց անուններն այդպես էլ չգտան ցուցակներում, թեպետ 11 տարի շարունակ ընտրացուցակները փորձեցին մաքրել, արդյունքում՝ նորից՝ մահացածների ու հաշվառումից ելածների անուններ: Գյումրիի քաղաքապետ Վարդան Դուկասյանի խոսքերով, նախկին՝ «խոլեռա» ընտրացուցակներից 15 հզ. կրկնվող անուններ և մեռած հոգիներ են հանվել: Բայց և այնպես, մարզի 2000 ընտրող իր ընտրական իրավունքը վերականգնեց դատարանի վճռով:

Ընտրական գործընթացը Շիրակի մարզի շատ համայնքներում անցել է ընտրական օրենսգրքի կոպիտ խախտումներով. օրինակ՝ Գյումրիի շուրջ 10 տեղամասերում՝ թիվ 47, 39, 63, 31, 8 և այլն, ընտրողների թիվը գերազանցել է 2000-ը, տեղամասային կենտրոնների փոփոխության մասին ժամանակին տեղյակ չի պահվել ընտրողներին, ինչն ընտրության օրը խառնաշփոթի պատճառ էր դարձել: Գյումրիում ավագանու ընտրությունների համար ընտրատարածքները կազմավորվել են ընտրական օրենսգրքի խախտումներով. Գյումրին բաժանվել էր 3 ընտրատարածքների, որոնցից մեկի ցուցակներում 35443 ընտրող կար, իսկ երկրորդում՝ 42901: Ըստ ընտրական օրենսգրքի պահանջի, ընտրատարածքների միջև ընտրողների թվի տարբերությունը չպիտի գերազանցեր ընտրողների թվի 15 տոկոսը, այնինչ վերոհիշյալ դեպքում այդ տարբերությունը կազմում է 17.38 %:

Խախտվել է նաև օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը՝ նախընտրական քարոզչության մասին և այն չարաշահել են հատկապես համայնքի ղեկավար թեկնածուները: Նկատվել են ընտրողների վրա ճնշումներ գործադրելու և ընտրակաշառք բաժանելու դեպքեր: Օրինախախտումների այս երկու դասակարգերը առկա են եղել բոլոր ընտրություններում, բայց այս անգամ ընտրողներից շատերը՝ վերցնելով իրենց առաջարկված 1000-1500 դրամը կամ այդքան արժեցած ընտրակաշառքը, ընտրել են իրենց նախընտրած և ոչ թե կաշառատու թեկնածուին: Շատ թեկնածուներ, այդ թվում Գյումրիի ավագանու անդամության թեկնածուներ, մի քանի հազար դոլարի կաշառք, նվեր, դեղորայք բաժանելուց հետո, ստանալով ընտրողների կեղծ կամ կիսով չափ կեղծ վստահությունը, հայտնվեցին «խաղից դուրս» վիճակում՝ կտրած տաշտակի առաջ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները ընտրական նոր օրենսգրքի համար լուրջ փորձադաշտ էր, և պատասխանատուները, հատկապես ընտրական հանձնաժողովները, ցանկացած խախտում կապում էին չարաքաստիկ օրենքի հետ, որը շրջանառության մեջ մտավ ընտրություններից 2-3 ամիս առաջ: Սա էլ հիմք հանդիսացավ, որ ընտրական հանձնաժողովների շատ անդամներ «շողշողային» օրենսգրքից իրենց անտեղյակությամբ: Օրենքի չիմացության հետևանք էր, թե դիտավորություն, եղել են հանձնաժողովներ, որտեղ ավագանու անդամության թեկնածուն ընդգրկվել է որպես ընտրական հանձնաժողովի անդամ: Այս օրինախախտման հետևանքով Շիրակի մարզի Աղվորիկ համայնքում ընտրությունները համարվեցին անվավեր: Դատարանի վճռով, դարձյալ տեղամասային հանձնաժողովի անփառունակ աշխատանքի արդյունքում, անվավեր համարվեցին նաև Գուսանազյուղ համայնքի ընտրությունները:

Հետաքրքիրն այն է, որ այս ամենի մասին բարձրաձայն խոսվեց միայն ընտրություններից մեկ ամիս անց՝ մարզխորհրդի հերթական նիստում, որին մասնակցում էին համայնքի նորընտիր ղեկավարները: Այնինչ, ժամանակին հնարավոր էր խախտումներից շատերը կանխել, բայց չկանխվեց ու դեռ խոսում են, թե ընտրություններն անցել են բարձր մակարդակով:

Հոկտեմբերի 20-ին Շիրակի մարզի 119 համայնքից 113-ում կայացան ՏԻՄ ընտրություններ՝ 95-ում համայնքի ղեկավարի և 104-ում ավագանու անդամների ընտրություններ: 22 համայնքում ընտրվել են համայնքի նոր ղեկավարներ, այդ թիվը կազմում է ընտրություններին մասնակցած համայնքի ղեկավարների 23.1 տոկոսը: Քեթիում և Բաշգյուղում համայնքի ղեկավարները որոշվել են վիճակահանությամբ, ասել է թե լոտո են խաղացել «բախտի բերմամբ, թե պատահմամբ»: Իսկ ամբողջ մարզի համայնքների ավագանիների 584 անդամներից շուրջ 60 տոկոսը վերընտրվել է:

Այսօր դեռևս մեկ համայնք՝ Մեծ Սարիարը դեռ համայնքի ղեկավար չունի: Հոկտեմբերի 20-ի և նոյեմբերի 10-ի ընտրություններին ոչ ոք ցանկություն չհայտնեց առաջադրվել, և մարզպետի որոշմամբ, Մեծ Սարիարում նոր ընտրություն նշանակվեց դեկտեմբերի 25-ին: Այս անգամ առաջադրված թեկնածու կա:

Սաթենիկ Կաղզվանցյան

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԱԾ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից շատ ցանցած ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբը որոշեց Գյումրիում իրականացնել հանրային կարծիքի նոր հետազոտություն: Նոյեմբերի 16-20-ը Գյումրիում իրենց բնակարաններում և կացարաններում անստորագիր հարցվեց 600 չափահաս մարդ: Հարցումները երկու թեմա էին ներառում. անցած ՏԻՄ ընտրությունները և Գյումրիում գործող կամ հեռարձակվող էլեկտրոնային ՋԼՄ-ների վարկանիշեր: Հարցաթերթիկը պարունակում էր հետևյալ հարցերը.

1. Մասնակցե՞լ եք քաղաքապետի եւ ավագանու նախորդ՝ 2002 թվի հոկտեմբերի 20 ընտրություններին որպես ընտրող:
2. Արդյո՞ք այդ ընտրությունների ժամանակ Ձեզ ընտրակաշառք առաջարկել են:
3. Ինչպիսի՞ դժվարություն ունեցաք այս ընտրություններին մասնակցելիս:
4. Ի՞նչ խախտումներ եք նկատել անցած՝ 2002թ հոկտեմբերի 20-ի ընտրությունների ժամանակ:
5. Ի՞նչ եք կարծում Գյումրիում գործող հեռուստատեսություններից ո՞րը քաղաքապետի ո՞ր թեկնածուին էր պաշտպանում քարոզարշավի ժամանակ:
6. Որքանով կկարողանա Գյումրիի վերընտրված քաղաքապետը լուծել քաղաքի պրոբլեմները:
7. Որքանով կկարողանա Գյումրիի նորընտիր ավագանին լուծել քաղաքի պրոբլեմները:
8. Կարելի՞ է անցած ընտրությունները համարել ազատ եւ արդար ընտրություններ:
9. Ի՞նչ հեռուստաալիքներ եք հավանում եւ դիտում ամենաշատը: Թվեք ըստ կարելիության:
10. Ո՞ր լրատվական թողարկումներն եք հավանում եւ շատ դիտում՝ բոլոր հեռուստաալիքներից. թվեք ըստ կար-որության:
11. Ի՞նչ ռադիոկայաններ եք լսում ընդհանրապես: Թվեք ըստ կարելիության:
12. Թվեք այն կոնկրետ հաղորդումներն ու ծրագրերը, որոնք հավանում եւ մշտապես դիտում եք:
13. Ո՞ր ժամերին եք հեռուստացույց դիտում:
14. Եթե ռադիո լսում եք, ապա՝ ո՞ր ժամերին:

«Ասպարեզ» Հանդեսի ընթերցողները կնկատեն, որ 9-14-րդ հարցերով հարցախույզեր ակումբն իրականացրել է նաև 2001 հոկտեմբերից-2002-ի հունիսը: 5-րդ հարցը ըստ էության անմեղ սադրանք էր պարունակում. բանն այն է, որ մենք կամեցել էինք պարզել, թե ինչպես է այդ խնդրո առարկան տպավորվել գյումրեցիների մտքում:

Ստորև բերվում է հարցումներից ստացված արդյունքներից քաղվածք, իսկ դրանք ամբողջությամբ ունենալու համար կարող եք դիմել ակումբ հետևյալ ուղղություններով. Հայաստան, Գյում,րի, Նժդեհի 18/18, հեռախոս (0 41) 33540, Email levon@asparez.am

Հարց 2. Արդյո՞ք այդ ընտրությունների ժամանակ Ձեզ ընտրակաշառք առաջարկել են.

Այո	8,3 %
Ոչ	91,6 %

Հարց 3. Ինչպիսի՞ դժվարություն ունեցաք այս ընտրություններին մասնակցելիս.

ոչ մի դժվարություն	80,0 %
ցուցակների հետ	10,3 %

կապված	
դիմել են դատարան	2,5 %
Տեղամասի	4,8 %
Անձնագրի	1,0 %
լույսը մարելու	0,1 %
Հիվանդության	0,6 %

Հարց 4. Ի՞նչ խախտումներ եք նկատել անցած՝ 2002թ հոկտեմբերի 20-ի ընտրությունների ժամանակ.

խախտում չեն նկատել	69,1 %
խախտում նկատել են	13,1 %
չեն մասնակցել	4,1 %
չի եղել	3,5 %
հոսանքազրկում	2,3 %
կաշառք	2,0 %
ցուցակների անձշտություն	1,5 %
քարոզչություն	1,1 %
լրիվ խախտումներ են	1,0 %
շատ-շատ	0,6 %
անձնագրի հավաքում	0,5 %
չեն հետաքրքրվել	0,5 %
դժվ. են պատասխանել	0,1 %
ին գործը չէ	0,1 %

Հարց 5. Ի՞նչ եք կարծում Գյումրիում գործող հեռուստատեսություններից ո՞րը քաղաքապետի ո՞ր թեկնածուին էր պաշտպանում քարոզարշավի ժամանակ

	Լեվոն Գալստյան	Մարտին Զիլֆինյան	Վարդան Ղուկասյան	ԸՆԴԱՄԵՆԸ՝ ենթադրյալ կողմնակալության ցուցանիշը
Շանթը	1,5 %	7,2 %	16,5 %	25,16 %
Շիրակը	2,2 %	1,0 %	11,7 %	14,83 %
Ցայգը	2,0 %	4,7 %	22,3 %	29,00 %
Ընդամենը	5,7 %	12,9 %	50,5 %	69,00 %

Հարց 6. Որքանով կկարողանա Գյումրիի վերընտրված քաղաքապետը լուծել քաղաքի պրոբլեմները.

Լիարժեք	24,3 %
Բավարար	54,0 %
Մի կերպ	11,5 %
Չի լուծի	2,8 %
Այլ պատաս.	7,3 %

Հարց 7. Որքանով կկարողանա Գյումրիի նորընտիր ավագանին լուծել քաղաքի պրոբլեմները.

Լիարժեք	3,0 %
Բավարար	29,0 %
Մի կերպ	23,8 %
Չի լուծի	29,3 %
Այլ պատաս.	14,8 %

Հարց 8. Կարելի՞ է անցած ընտրությունները համարել ազատ և արդար ընտրություններ.

Հաստատ	7,8 %
Այո	37,0 %
Դժվարությամբ	35,8 %
Ոչ	17,0 %
Այլ պատաս.	2,3 %

ԳՅՈՒՄՐՈՒ ՆՈՐ ԱՎԱԳԱՆԻՆ

Հանդեսի այս համարի լույս ընծայումից առաջ խմբագրական խորհուրդը որոշեց տպագրել Գյումրու նորընտիր ավագանու անդամների կենսագրականները, նաև ստանալ մի քանի հարցերի պատասխաններ նրանցից՝ ավագանու դերի և առաքելության, Գյումրու առաջնահերթ խնդիրների մասին և այլն: Հաջորդիվ էջերում ընթերցողը հնարավորություն ունի ծանոթանալու այդ բլից հարցերի պատասխաններին, որոնք տվել են Գյումրու ավագանու 15 անդամներն ու վերընտրված քաղաքապետը:

Ավելացնենք նաև մի քանի ուշագրավ տեղեկություն: 1999 թվին ավագանու անդամության համար առաջադրված 84 թեկնածուներից միայն 6-ն էին, որ 1996-ին ընտրված ավագանու կազմում էին և կամեցել էին վերընտրվել, մյուս 9-ը 1999-ին վերընտրվելու ցանկություն չունեցավ՝ իմաստ չտեսան: 1999-ին ավագանու գործող 6 անդամներից վերընտրվեցին միայն 2-ը՝ Ժորա Միքայելյանը և Հովհաննես Ասոյանը:

Այս անգամ՝ 2002-ին Գյումրու ավագանու անդամության համար առաջադրված 49 հոգուց 14-ը 1999-ին ընտրվածներն էին, փաստորեն միայն Ռուբեն Սարգսյանն էր, որ չէր կամեցել վերընտրվել, նույն ընտանիքից առաջադրվել էր նրա կրտսեր եղբայրը՝ Ռուստամ Սարգսյանը, որի անունը քվեաթերթիկում չկար կամ տպվել էր կոպիտ տառապխալներով՝ Ռոստոմ, և, որը այնքան էլ հեռու չէր հաջողությունից...

Այս անգամ վերընտրվել կամեցող 14 հոգուց հաջողեց 11-ը: Փաստորեն.

Այս անգամ վերընտրվել կամեցողները կրկնակիից ավելի շատ էին, քան 3 տարի առաջ:

Այս անգամ վերընտրվել կարողացավ Գործող ավագանուց թեկնածու առաջադրվածների մեծամասնությունը՝ 78.6 տոկոսը: 1996-ին այդ ցուցանիշը 33.3 տոկոս էր: Հետևություն. Գյումրու 1999-2002 թթ. ավագանու կազմը ընդհանուր առմամբ ավելի շահեկան է գտել ավագանու կարգավիճակը, քան 1996-1999-ի կազմը, 1999-2002-ի կազմը ավելի լավ է տիրապետում ընտրական տեխնոլոգիաներին, քան 1996-1999-ի կազմը, կամ ընտրողներն ավելի գոհ էին 1999-2002-ի կազմից, քան նախորդ ավագանուց:

Գյումրու ավագանու ամենաստաժավոր անդամը Ժորա Միքայելյանն է, նա ընտրվեց արդեն երրորդ անգամ:

Գյումրու ավագանու անդամներից ամենատարեցը Երկաթգծի թաղամասից երկրորդ անգամ ընտրված Էդուարդ Գրիգորյանն է: Տարիքով ավագների յոթնյակը մնացել է նույնը՝ ինչ նախորդ կազմում էր: Ավագանու կրտսեր անդամը կրկին Դրաստամատ Չվակերյանն է:

Այս անգամ կազմված ավագանու միջին տարիքը 40,9 տարեկան է, քաղաքապետը 41 տարեկան է: Նախորդ կազմի միջին թվաբանական տարիքը ավագանու կազմավորման պահին 40,2 տարեկան էր:

Ավագանու նորընտիր կազմից 2 հոգի ունեն իրենց անունների հետ կապ չունեցող մականուններ՝ 13.33%: Այդ ցուցանիշը բանականաչափ ցածր է, եթե հաշվի առնենք, որ այս քաղաքը Գյումրին է, և գործող Ազգային ժողովի պատգամավորների համար այդ ցուցանիշը 15,26 % է...

Բազմիցս խոսվել է այն մասին, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքը բավականաչափ լայն լիազորություններ է ընձեռում համայնքների ավագանիներին՝ համայնքի կյանքի կազմակերպման, հատկապես համայնքի զարգացման ուղղությամբ: Հաջորդ էջերում զետեղված հարցազրույցներից մեզ պարզ դարձավ, որ Գյումրու նորընտիր ավագանին հազիվ կիսով չափ է պատկերացնում իր օրինական հնարավորությունների ամբողջ հզորությունը: Ակնհայտ է, որ առաջիկա 3 տարում հանուն քաղաքի զարգացման և հզորացման՝ Գյումրու ավագանու հետ հսկայական աշխատանք ունեն անելու ժուռնալիստները, զանգվածային լրատվամիջոցները, հասարակական կազմակերպությունները, կուսակցությունները և ընտրողների ակտիվ շերտերը: Միայն այսպիսով ավագանին կկայանա որպես համայնքի օրենսդիր մարմին, և չի ունենա այնպիսի խայտառակ ցածր վարկանիշ, ինչպիսին ուներ նախորդ ավագանին: Չմոռանանք, որ այս կազմից 11 հոգի հներն են:

Ասպարեզ Լրատվական Կենտրոն

Ոչ պաշտոնական քաղվածք ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքից.

Հոդված 11. «... Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ: ...»

Հոդված 11. «... Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերվող ցանկացած հարց: ...»

Հոդված 12. «Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն հինգ օր

առաջ ներկայացրած գրավոր հարցերից: ... Հարցերի հեղինակները պետք է ներկայացնեն որոշման նախագծեր:...

Հոդված 16.2 «...Հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը:»

Հոդված 16.20 «... որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքը վարձակալության հանձնելու և օտարելու մասին, հաստատում է դրանց վարձավճարների, օտարման գների չափերը և պայմանները, իսկ աճուրդային եղանակով օտարելու դեպքում՝ գույքի մեկնարկային գինը:»

Հոդված 16.23 «...որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ:»

Հոդված 16.26 «...Հաստատում է համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույթաչափերը:»

Հոդված 16.31 «Համայնքի ավագանին իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:»

ՎԱՐՂԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Գյումրու քաղաքապետ

- Առաջիկա 3 տարվա համար ո՞ր հիմնախնդիրներն են համարում առաջնահերթ, որոնք չհասցրեցիք լուծել անցած 3 տարում:

-Քաղաքի խնդիրները շատ են՝ բնակարանաշինություն և աշխատատեղերի ստեղծում, քաղաքի բարեկարգում, լուսավորում, կանաչապատում, ասֆալտապատում, ժողովրդի սոցիալական վիճակի բարելավում ... պրոբլեմները շատ-շատ են:

- Ի՞նչ եք կարծում, Ձեր լիազորությունները թույլ տալի/ս են, որ այդ կարգի խնդիրներ լուծեք:

-Տան- չտան՝ պետք է լուծենք: Չեն տալիս, բայց պետք է լուծենք:

- Ի՞նչ տարբերակով:

-Դրանց լուծումը գտնում են որպես պատրիոտ, որպես քաղաքի նվիրյալ, որպես քաղաքը սիրող, որպես տղամարդ, այդ պետք է մենք քաղաքը սարքենք: Թե ինչպես պետք է սարքենք՝ աստված գիտե և մենք:

- Ձբաղվելու՞ եք քաղաքականությամբ:

-Ես զգվում եմ քաղաքականությունից, բայց ուզեմ թե չուզեմ, մտել եմ քաղաքականության մեջ՝ ի շահ մեր քաղաքի, մեր ժողովրդի:

- Առջևում նախագահական ընտրություններն են: Ցանկացած հաղթանակած նախագահի հետ նույն ոգով աշխատելու՞ եք:

-Քաղաքապետը նույն ոգով, նույն ավյունով աշխատելու է, բայց ես ուզում եմ ասել, որ ներկայիս ղեկավարի հետ մենք լավ ենք աշխատում: Ներկայիս ղեկավարը երկրի համար ավելի պիտանի է՝ Գյումրին շենացրել է, երկիրը շենացրել է, երկիրը խաղաղ է, աշխատատեղեր են բացվում օրեցօր, շենքեր են կառուցվում, կույր են մարդիկ, որ չտեսնեն այս ամենը և չգնահատեն: Ո՞վ չի ուզում, որ երկիրը միանգամից շենանա, ո՞ր մարդը չի ուզում... Մանավանդ ղեկավարը և այն էլ նվիրված՝ ո՞նց կարող է հանկարծ չուզի, որ երկիրը շենանա ու կառուցվի: Ես գտնում եմ, որ պետք է մենք միասին ձեռք ձեռքի տված պաշտպանենք ներկայիս նախագահին, որպեսզի իրոք կառուցվի այս քաղաքը: 10-12 տարի վաղ չինովիկների պատճառով Գյումրին մնաց աղետի գոտի: Աղետի գոտին պահել էին, որ գումարները գային և իրենց համար Ֆրանսիաներում երկհարկանի տներ կառուցեին, բայց այսօրվա գումարները նպատակաուղղվում են Գյումրի և աղետի գոտի: Այսօր հարցը լուծվում է օրեցօր, ո՞վ չի տեսնում, չտեսնողը թուրքից սերված է:

- Մեկ այլ նախագահի դեպքում հնարավո՞ր է աշխատանքը չստացվի:

-Ես չգիտեմ, նախ չեմ էլ պատերազմում, որ իրենից բացի ուրիշ մարդ լինի: Ես վստահ ասում եմ, որ ժողովրդի միջից դուրս եկած մարդ լինելով, ժողովուրդը նրան իրոք ընտրելու է:

- Քաղաքապետարանում ի՞նչ կադրային փոփոխություններ են կատարվել:

-Փոփոխություն է տեղի ունեցել բնակկոմունալ բաժնում: Թաղևտանյան Ռազմիկը հիվանդության պատճառով հավանական է մեկ այլ աշխատանքի տեղափոխվի, Դարբինյան Դանիելը ևս նույն սկզբունքով: Նշանակումներ եղել են. բնակկոմունալ բաժինը ղեկավարում է Գրքիկյան Հովհաննեսը, իսկ բնակբաժինը՝ Ղազարյան Գարիկը:

- Ավագանու աշխատանքը Ձեզ գոհացնո՞ւմ է:

-Այո, ավագանու աշխատանքից ես շատ գոհ եմ և շնորհակալություն եմ հայտնում նախորդ ավագանու անդամներից, և նրանց, ովքեր չեն վերընտրվել՝ նրանք 4-ն են: Երբ մենք ընտրվեցինք 1999 թ., ավագանու անդամության թեկնածուները ինձ հետ քարոզարշավին չեն մասնակցել, այլ եղել են այլ թեկերից ընտրված,

բայց ի շահ ժողովրդի և մեր քաղաքի, ճշմարտությունը տեսնելով ասել են, թե ներկայիս քաղաքապետը լավ է աշխատում, մենք իրար հետ ենք, ժողովրդի հետ ենք, և դրա համար ես ասում եմ «մալադեց», աշխատում են ճիշտ ձևով, ճիշտ որոշումներ են կայացվում ի շահ ժողովրդի և դրա համար ես իրենցից գոհ եմ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷՂՈՒԱՐԴ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 54 տարեկան է:

Ավարտել է 25-րդ դպրոցը:

1968-ին ընդունվել է Դոնի Ռոստովի երկաթգծի ինժեներական ինստիտուտի հեռակա բաժնի շինարարական ֆակուլտետը:

1976 թ. աշխատել է Ախուրյանի կոմունալ բարեկարգման գրասենյակում որպես աշխույժ:

1987 թ. աշխատել է Լենինականի Շիրակի շրջանի ֆիզկուլտ կոմիտեում:

1996-1999 թթ. ձեռնարկել և թաղի բնակիչների հետ կառուցել է երկաթուղայինների մարզադաշտը:

1999 թ. ընտրվել և 2002-ին վերընտրվել է Գյումրի համայնքի ավագանու անդամ:

Անկուսակցական է:

- Ինչո՞ւ որոշեցիք ավագանու անդամ դառնալ:

- Ես որոշեցի ավագանու անդամ դառնալ ժողովրդի, իմ թաղի խնդիրները լուծելու համար: Եթե իմ թաղը խնդիրներ ունենա, ես հնարավորության չափով կօգնեմ:

- Որ՞ն է ավագանու առաքելությունը Գյումրի վերականգնման գործում:

- Գյումրին դարձնել մեր իմացած հին և ավանդական քաղաքը, որոշ չափով ժողովրդի վիճակը բարելավել:

- Ըստ Ձեզ, որո՞նք են Գյումրի համար ամենակարևոր 3 խնդիրները, և կա՞ն արդյոք դրանց լուծման ուղիները:

- Առաջին հերթին թող քաղաքը մի քիչ նմանվի Լենինականին, երկրորդ հերթին՝ գոնե քիչ-քիչ աշխատատեղեր բացվեն և երրորդ խնդիրը՝ ժողովուրդը լավ լինի:

Այս խնդիրների լուծման համար ավագանուց այդքան բան կախված չէ, կառավարությունից է կախված: Բայց ասեմ, որ քաղաքապետը լավ էլ աշխատում է՝ ավագանու հետ համագործակցելով:

ԷՂՈՒԱՐԴ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 53 տարեկան է:

Միջնակարգ կրթություն ստացել է 16-րդ դպրոցում:

Սովորել և ավարտել է 3-րդ պրոֆտեխուսումնարանը՝ ռադիոտեխնիկի մասնագիտությամբ: Նույն ուսումնարանում աշխատել է որպես արտադրական ուսուցման վարպետ-դաստիարակ մինչև 1978թ.:

1978-83 թթ. աշխատել է 42-րդ պրոֆտեխուսումնարանում՝ որպես վարպետ - դաստիարակ:

1983-88 թթ. նույն ուսումնարանում աշխատել է որպես փոխտնօրեն:

1970-73 թթ. սովորել և ավարտել է Լենինականի շինարարական տեխնիկումը և ստացել տեխնիկ-շինարարի որակավորում:

1977-82 թթ. աշխատանքին զուգընթաց սովորել և ավարտել է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

1988-90 թթ. աշխատել է Լենինականի Ստ. Շահումյանի անվան հանգստի տան տնօրեն:

1991 թ. մինչև 1995 թ. աշխատել է Կինոտեսաավարձույթի միջշրջանային բաժանմունքի տնօրեն:

1995 թ. մինչև 2002 թ. աշխատել է Գյումրու համայնքի «Առևտրի սպասարկում» ՓԲԸ գործադիր տնօրեն:

1991-1996 թթ. ընտրվել է Լենինականի քաղխորհրդի պատգամավոր:

1999 թ. ընտրվել և 2002-ին վերընտրվել է Գյումրի համայնքի ավագանու անդամ:

Անուսանցած է, ունի երկու երեխա և երկու թոռնիկ:

Հանրապետական կուսակցության անդամ է:

- **Ինչո՞ւ որոշեցիք ավագանու անդամ դառնալ:**
- Կուզեի ավելի մոտ լինել ժողովրդին՝ միաժամանակ կապ պաշտպանելով իշխանությունների հետ:
- **Ըստ Ձեզ, ո՞րն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:**
- Ցանկալի է, որ Գյումրին մեր աչքի առաջ է ծաղկում: Մենք բոլորս էլ՝ ավագանու անդամները, դրանում փոքր լուծմա ունենք:
- Ըստ Ձեզ, որո՞նք են Գյումրիի համար առաջնահերթ երեք խնդիրները, և կա՞ն դրանց լուծման ուղիներ:
- Կուզեի, որ Գյումրիում աշխատատեղեր բացվեին, որպեսզի աշխատավոր ժողովուրդը պարապ չմնա: Երկրորդը. կարևոր է, որ երիտասարդությունը հոգատար ձեռքերի մեջ լինի, նրանց համար ժամանցի վայրեր ստեղծվեն: Երրորդ կարևոր խնդիրն այն է, որ այս երեք տարիների ընթացքում կատարենք այն, ինչ երազում ենք: Իսկ այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ:

ՀՐԱՉ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 50 տարեկան է:
Ավարտել է թիվ 26 միջնակարգ դպրոցը:
Ավարտել է Գյումրիի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը:
1975-76 թվերին ծառայել է խորհրդային բանակում:
1976 թ. աշխատել է կոշիկի ֆաբրիկայում, որպես աշխատանքի գիտական կազմակերպման ինժեներ:
1977 թ. ընտրվել է ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար:
1982 թ. ընդունվել է Լենինականի Պոլիտեխնիկական ինստիտուտի կաշվե իրերի տեխնոլոգիայի հեռակա բաժին:
1982 թ. ընտրվել է կուսակցական բյուրոյի քարտուղար:
1991 թ. աշխատել է կոշիկի ֆաբրիկայում՝ գլխավոր ինժեների տեղակալ:
1993 թ. աշխատել է «Գարեջրի-ածիկի» գործարանում՝ մատակարարման և առաքման բաժնի ինժեներ:
1999 թ. ընտրվել և 2002-ին վերընտրվել է Գյումրու ավագանու անդամ:
Անկուսակցական է: Ամուսնացած՝ ունի 3 երեխա:

- Ինչո՞ւ որոշեցիք երկրորդ անգամ դառնալ ավագանու անդամ:
 - Ճիշտն ասած մեծամտություն կլինի, եթե ես ասեմ, թե ժողովուրդն իրոք ցանկացել է, որ ես դառնամ ավագանու անդամ, որովհետև իմ աշխատած ժամանակաշրջանում ես կարողացել եմ ժողովրդի հետ աշխատել, վեր հանել այնպիսի հարցեր, որոնք հուզել են մարդկանց և որոշ չափով լուծվել են այդ հարցերը: Ես երկար տարիներ եմ աշխատել հասարակական կազմակերպությունում և այսօր էլ կարելի ասել, որ ավագանին հասարակական աշխատանք է, որովհետև առանց աշխատանքի և աշխատավարձի է կատարվում: Ինձ համար գուցե և հաճելի էլ է ժողովրդի հետ աշխատելը: Անցած տարիներին կարողացել եմ որոշ բաներ անել ժողովրդի համար, դա չեմ համարում հաղթանակ, բայց կաշխատեմ, որ նոր ընտրված ժամանակաշրջանում կարողանամ ժողովրդի որևէ հոգս հոգալ:

- Ո՞րն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:
 - Գիտեք, վերականգնման գործը մենակ ավագանու աշխատանքով չի պայմանավորված: Դա մի մեծ կոմպլեքս աշխատանք է: Ավագանին աշխատում է ոչ միայն քաղաքապետի, այլև քաղաքապետարանի բոլոր բաժինների հետ և շատ հարցեր ենք ներկայացնում կառավարություն, որոնց իրականացումը մեր իրավասություններից դուրս է և աջակցում ենք, որ լիակատար որոշումներ ընդունվեն, որը քաղաքին կրթի վերափոխում և վերակառուցում:

- Թվարկեք Գյումրիի համար ամենահրատապ լուծում պահանջող 3 խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները:
 - Այսօր ամենակարևոր հարցը Գյումրի քաղաքում աշխատատեղերի ստեղծումն է, ինչին հասնելու համար ավագանին և քաղաքապետը շատ քիչ հնարավորություններ ունեն: Դա կառավարության և նախագահի մակարդակով լուծվող հարց է: Մենք կարող ենք աջակցել միջին և մանր բիզնեսին:

Քաղաքապետարանը այդ հարցում կարող է տեղեր տրամադրել, անհատույց հող տալ, բայց ասել, թե քաղաքապետն ու ավագանին աշխատատեղ կարող են ստեղծել՝ դա շատ սխալ կլինի: Քաղաքապետարանը աշխատատեղ ստեղծեց, տրամադրելով հող և վարկեր Մուշ թաղամասում, կարողացանք 300 աշխատատեղ ստեղծել, իսկ մեծ աշխատատեղեր Գյումրիի քաղաքապետարանն ու ավագանին ստեղծել չի կարող:

Երկրորդ խնդիրը տնակային տնտեսություններն են: Մենք պետք է աջակցենք քաղաքապետին, իհարկե հանրապետության նախագահի հետ, որպեսզի մինչև 2004 թ. բնակարանային շինարարությունն ավարտենք:

ՀԵՆՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, ծառայողի ընտանիքում, 49 տարեկան է:

1960-1970 թթ. սովորել և ավարտել է 15-րդ միջնակարգ դպրոցը:

1972-74 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1975 թ. աշխատանքի է անցել Լենինականի հղկող հաստոցների գործարանում՝ որպես փականագործ: Նույն թվականին, աշխատանքին զուգահեռ, ընդունվել է Երևանի Պետական Համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հեռակա բաժինը:

1980 թ. ավարտելով ժողտնտեսության ինստիտուտը, ստացել է տնտեսագետի որակավորում:

1980 թվից աշխատանքի է անցել Լենինականի առևտրի վարչության դպրոցական սննդի կոմբինատում՝ որպես ապրանքագետ:

1987-1998 թթ. նույն կոմբինատում զբաղեցրել է տնօրենի պաշտոնը:

1998-2000 թթ. աշխատել է «Շիրակի փոստատուն դուստր» ՓԲԸ տնօրեն:

1999-ին ընտրվել և 2002-ին վերընտրվել է Գյումրու ավագանու կազմում:

2002 թ. ապրիլ ամսից աշխատում է Հայլեռտեխսկողության Շիրակի մարզային տեսչությունում:

Անուսնացած է, ունի երեք երեխա:

Անկուսակցական է:

- Ինչո՞ւ նորից որոշեցիք լինել ավագանու կազմում:

- Զգալով ժողովրդի այսօրվա սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, պայմանները, ուզեցի լինել ավագանու անդամ՝ քաղաքի հետագա բարգավաճման համար:

- Որ՞ն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:

- Ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում կայանում է նրանում, որ քաղաքապետարանի և մարզպետարանի հետ համատեղ կարողանանք ջանք ու եռանդ չխնայելով, կազմակերպել քաղաքի բարգավաճմանն ուղղված աշխատանքները:

- Ըստ Ձեզ, որո՞նք են Գյումրիի համար ամենակարևոր 3 խնդիրները, և դրանց լուծման ուղիները:

- Երևի թե չառանձնացնեն երեք խնդիր, որովհետև բոլորն էլ առաջնային են ծանր պայմաններում գտնվող Գյումրի քաղաքի համար: Առանձնացնել երկու-երեք խնդիր, բարոյական չէ, որովհետև գյումրեցու բոլոր հարցերն էլ հրատապ են՝ սկսած վառելիք հայթայթելուց մինչև սնվելը: Ավագանին համատեղ աշխատանքի արդյունքում կկարողանա խնդիրները լուծել:

ՍԱՄԿԵԼ ԶԱՆՈՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 48 տարեկան է:

Ավարտել է թիվ 7 դպրոցը:

1976-77 թթ. ծառայել է բանակում:

Սովորել և ավարտել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

1978-85 թթ. աշխատել է կենտրոնի քարտուղար:
 1985-1988 թթ. Մոսկովյան շրջգործկոմում հրահանգիչ է աշխատել:
 1988 թ. սովորել է Բաքվի բարձրագույն կուսակցական դպրոցում:
 1989 թ. աշխատել է շրջխորհրդի Ջազսի վարիչ:
 1991 թ. ընտրվել է Գյումրի քաղաքի պատգամավոր:
 1996 թ. քաղաքային սովետի սոցապ բաժնի վարիչ է եղել:
 1997 թ. կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի Գյումրիի զբաղվածության բաժնի պետ:
 1999-ին ընտրվել, իսկ 2002-ին վերընտրվել է Գյումրու ավագանու կազմում:
 2002 թվից «Արմեն-կարպետ» ԲԲԸ-ի տնօրեն:
 Անուսնացած է, ունի երկու երեխա:
 Անկուսակցական է:

- Ինչո՞ւ որոշեցիք ավագանու անդամ դառնալ:

- 1991 թվականից ես Գյումրու քաղխորհրդի գործկոմի պատգամավոր եմ եղել և, իրավունքներս, պարտականություններս քաջ գիտակցելով, որոշեցի դառնալ ավագանու անդամ:

- Ըստ Ձեզ, ո՞րն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:

- Քաղաքի վերականգնման համար Գյումրու ավագանու դերը շատ մեծ է:

- Ըստ Ձեզ, որո՞նք են Գյումրիի համար ամենակարևոր երեք խնդիրները, և կա՞ն դրանց լուծման ուղիներ:

- Գյումրիի համար ամենակարևոր խնդիրներից մեկը բնակարանաշինությունն է, աշխատատեղերի ստեղծումը և Գյումրիի վերականգնումը: Լուծման ուղիներից մեկն այն է, որ կատարենք մեր խոստացածն ու ստանձնածը:

ԺՈՐԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 47 տարեկան է:

1972 թ. ավարտել է թիվ 14 միջնակարգ դպրոցը:

1977թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաձյուղը, ստանալով ինժեներ-շինարարի որակավորում:

1978-89 թթ. աշխատել է գիտությունների ակադեմիայի երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտում՝ ինժեներ-շինարար, պետի տեղակալ:

1987 թ. ավարտել է ասպիրանտուրան՝ «Շինարարական կոնստրուկցիաներ» մասնագիտությամբ:

1989-92 թթ. աշխատել է Գյումրիի «Էլեկտրակենցաղսարք» գործարանում՝ շինարարության հարցերով փոխտնօրեն:

1992-98 թթ. աշխատել է շինարարական «Կոմինվեստ» պետական ձեռնարկության գլխավոր տնօրեն:

1993 թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը, ստացել է տնտեսագետի որակավորում:

1998 թ. դեկտեմբերից աշխատում է ՀՀ քաղաքաշինության նախարարության Շիրակի տարածքային քաղաքաշինական պետական տեսչության պետ:

1990-96 թ. ընտրվել է Գյումրու քաղաքային խորհրդի ժողովրդական պատգամավոր, շինարարության, քաղաքաշինության և ճարտարապետության հանձնաժողովի նախագահ:

1996, 1999 և 2002 թ. ընտրվել է Գյումրու ավագանու անդամ:

Անուսնացած է, ունի երեք երեխա:

- Ի՞նչու որոշեցիք երրորդ անգամ դառնալ ավագանու անդամ:

- Առաջինը մտածում եմ՝ քանի հնարավորություն ունեմ բարի գործ կատարելու, քանի հնարավորություն ունեմ տեղական իշխանության մարմնի իրավասության սահմաններում օգտակար լինել մեր քաղաքին և գյումրեցիներին, արժե որ լինեմ ավագանու կազմում: Եվ երկրորդը՝ իմ անցած ճանապարհով, ես արդեն չորրորդ անգամ եմ ընտրվում տեղական իշխանությունում և ես մտածում եմ, որ եթե ժողովուրդը չորրորդ անգամ վստահում է, ուրեմն մի դրական բան արել եմ այս քաղաքի համար:

- Ո՞րն է ավագանու դերը քաղաքի վերականգնման գործում:

-Նախ պետք է հասկանանք, որ ավագանին ներկայացուցչական մարմին է՝ ժողովրդի ներկայացուցիչն է տեղական իշխանությունում: Ավագանին քաղաքապետարանի ֆունկցիա չպետք է կատարի կամ փորձի կատարել: Ավագանին կառուցողական իմաստով պետք է հակակշիռը լինի քաղաքապետի և քաղաքապետարանի բարձրացրած ցանկացած հարցի լուծման ժամանակ: Եվ իհարկե, ավագանին քաղաքապետի և քաղաքապետարանի աշխատակազմի հետ կառուցողական գործունեություն ծավալելով, իր իրավասության սահմաններում, նպաստի քաղաքի զարգացմանը, բնակչության հոգսերի լուծմանը և ինչ-որ տեղ թեթևացնի կամ լուծի այն բազմազան խնդիրները, որ կան Գյումրիում և ծառայած են գյումրեցիների առջև:

- Թվարկեք Գյումրվա այն 3 խնդիրները, որոնք իրատապ լուծում են պահանջում:

- Առաջինը. սոցիալական ոլորտը, քանի որ ժողովուրդը գտնվում է շատ վատ վիճակում և քաղաքապետարանի, քաղաքապետի և ավագանու խնդիրը առաջին հերթին պետք է ուղղված լինի դեպի ժողովուրդը՝ հոգալ ժողովրդի հոգսերը: Երկրորդը. գիտենք, որ քաղաքը վերականգնվում է պետական ծրագրերով և տեղական իշխանությունները պետք է նպաստեն, որպեսզի խոչընդոտներ չլինեն: Պետությունը, որ իրականացնում է վերակառուցման ծրագիրը, հանկարծ տեղական իշխանությունների պատճառով, հանկարծ տեղական հարցերով չխոչընդոտվի, ժամկետները չձգձգվեն, և այդ ծրագրերը հասնեն բարեհաջող ավարտին: Հիմնական խնդիրները սրանք են և դրանք կարելի է մանրացնել, խոսել քաղաքի բարեկարգման, կանաչապատման մասին, խոսել աշխատատեղերի մասին, որը երրորդ ամենակարևոր խնդիրն է: Առանց աշխատատեղերի, բարեկարգ, կառուցված քաղաքը ժողովրդին ուրախություն բերել չի կարող: Այս հարցին քաղաքապետն ու ավագանին լուրջ ուշադրություն պետք է դարձնեն, պետական ծրագրերին գումարելով տեղական ծրագրեր, այդպես փորձեն լուծումներ տալ:

ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, բանվորի ընտանիքում, 47 տարեկան է:
Ավարտել է Լենինականի 4-րդ միջնակարգ դպրոցը, այնուհետև կրթությունը շարունակել է Անասնաբուժա-անասնաբուժական ինստիտուտի կաթ-կաթնամթերքի արտադրության բաժնում:
1976-78 թթ. Ծառայել է խորհրդային բանակում:
1979-82 թթ. աշխատել է Ղուկասյանի պանրագործարանում՝ որպես արտադրամասի պետ:
1982-87 թթ. աշխատել է Մարալիկի հացի գործարանում որպես տնօրեն:
1987 թ. աշխատել է Չկալովի անվան կարի արտադրամասում՝ որպես պահեստապետ, 1989 թ.՝ արտադրամասի պետ, 1993 թ.՝ նույն արտադրամասում գլխավոր տնօրեն:
1996 թ. ընդունվել է Շիրակի մարզի Էկոնոմիկայի և Կառավարման համալսարանը:
2000 թ. ավարտել է հիշյալ համալսարանի լրիվ դասընթացը՝ ֆինանսներ և վարկ մասնագիտությամբ:
1997 թ-ից աշխատում է «Տեքստիլ» ԲԲԸ-ում՝ որպես հավատարմագրային կառավարիչ:
Անուսնացած է, ունի երկու երեխա:
1999-ին ընտրվել է 2002-ին վերընտրվել է Գյումրու ավագանու անդամ:

- Ինչո՞ւ որոշեցիք ավագանու անդամ դառնալ:

- Քանի որ երեք տարին շատ քիչ էր աշխատանքներն ավարտելու համար, իսկ ծրագրով դեռևս անելիքներ կան, դրա համար որոշեցի նորից վերընտրվել: Բացի այդ, քանի որ տարիների ընթացքում ստեղծել են 40 աշխատատեղ, ուստի իմ ընտրագանգվածը առաջարկեց կրկին առաջադրել թեկնածությունս:
- Ըստ Ձեզ, ո՞րն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:
- Ավագանու ամենակարևոր առաքելությունն այն է, որ ճիշտ որոշումներ կայացնի՝ նպաստելով քաղաքի վերականգնմանը:
- Ըստ ձեզ որո՞նք են Գյումրիի համար ամենակարևոր երեք խնդիրները, և դրանց լուծման ուղիները:
- Ամենակարևոր խնդիրը աշխատատեղերի ստեղծումն է, մարդկանց բնակարաններով ապահովելը և նրանց համար բարեկեցիկ կյանք ստեղծելը:

ՎԱՀԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Ամասիայի շրջանի Դոնջալի գյուղում, ծառայողի ընտանիքում, 45 տարեկան է:

Սովորել և ավարտել է Լենինականի թիվ 32 դպրոցը:

1974 թ. ընդունվել է Լենինականի երկաթուղու տեխնիկում, որտեղից զորակոչվել է բանակ: Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը նշված տեխնիկումում, միաժամանակ աշխատելով երկաթգծի Լենինական կայարանում՝ որպես տեխնիկական գրասենյակի օպերատոր:

1981 թ. ընդունվել է Դոնի-Ռոստովի երկաթգծի ինժեներների ինստիտուտի հեռակա բաժինը և ավարտել այն 1986 թվին՝ ստանալով փոխադրումների կառավարման ինժեների որակավորում:

1987 թ. ստանձնել է բեռնային բակի պետի պաշտոնը:

1988 թ. աշխատել է որպես կայարանապետի տեղակալ՝ բեռնային աշխատանքի գծով:

1993 թ. նշանակվել է Լենինականի կայարանի կայարանապետ:

1999 թ. աշխատում է որպես «Գյումրի կայարան» մասնաճյուղի տնօրեն:

1999 թ. պարգևատրվել է ՀՀ «Պատվավոր երկաթուղային» շքանշանով:

1999 թ. ընտրվել և 2002-ին վերընտրվել է որպես Գյումրու ավագանու անդամ:

Անուսնացած է, ունի երկու երեխա:

- Ինչո՞ւ որոշեցիք ավագանու անդամ դառնալ:

- Որոշեցի ավագանու անդամ դառնալ, որպեսզի քաղաքին օգուտ բերեմ: Ես պետական պաշտոնյա եմ, կայարանապետ, ուզում եմ այս երկու լծակները համատեղել, որպեսզի Գյումրիի համար որևէ բանով կարողանամ օգտակար լինել:

- Ըստ Ձեզ, ո՞րն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:

- Ճիշտ քննարկումները՝ բյուջեի քննարկումները, ծախսերը, եկամուտները, որոնք շատ կարևոր են Գյումրիի վերականգնման համար:

- Ըստ Ձեզ, որո՞նք են Գյումրիի համար կարևորագույն 3 խնդիրները և դրանց լուծման ուղիները:

- Կարևոր է աշխատատեղերի ստեղծման խնդիրը, որին այսօր պետականորեն էական մոտեցում ես չեմ տեսնում: Նաև կարևոր է քաղաքի բարեկարգման խնդիրը, որից հետո պետք է մտածել աշխատատեղերի ստեղծման մասին: Սա կախված է բիզնեսի զարգացումից: Երկրորդ կարևոր խնդիրն այն է, որ Գյումրին վերադառնա իր հին կոլորիտին: Երրորդ կարևոր խնդիրը. Գյումրին պիտի ունենա ինքնուրույն աշխատելու իրավունք:

ԱՐԱՄԱՅԻՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 44 տարեկան է:

Ավարտել է 19-րդ դպրոցը, որից հետո սովորել է հաստոցաշինական տեխնիկումում:

Ծառայել է խորհրդային բանակում:

Աշխատել է «Սառնարանային կոմպրեսորների» գործարանում, որին զուգահեռ սովորել է պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետում:

Երկրաշարժից հետո տեղափոխվել է «Էլեկտրակենցադասարք» գործարան, ուր մեկ տարի աշխատել է որպես ինժեներ-տեխնոլոգ, որից հետո տեղափոխվել է բնակչահագործման վարչության արտադրամաս՝ թիվ 22 ԲՇՏ-ում աշխատել է որպես վարպետ, հետո ինժեներ և այնուհետև՝ պետ:

1996 թ. տեղափոխվել է Անի թաղամասի թիվ 11 ԲՇՏ, որպես պետ, ուր աշխատում է մինչ օրս:

Անուսնացած է: Ունի 2 երեխա:

- Ինչո՞ւ որոշեցիք դառնալ ավագանու անդամ:

- Որոշեցի դառնալ ավագանու անդամ, որպեսզի ավելի բուռն կերպով մասնակցեմ քաղաքի վերականգնման աշխատանքներին:

- Ո՞րն է ավագանու դերը քաղաքի վերականգնման գործում:

-Ավագանու դերը տեսնում ենք քաղաքի կառուցման աշխատանքներում բուռն մասնակցության մեջ, նաև ժողովրդի դարդ ու ցավին մոտ կանգնած լինելը: 10-12 տարի աշխատել ենք ժողովրդի հետ և ավելի շատ ներդրում կարող ենք անել քաղաքապետարանում, տեղյակ լինելով ժողովրդի հոգսերին:

- Ո՞րոնք են քաղաքի համար 3 հրատապ խնդիրները և լուծման ուղիները:

-Քաղաքի համար ամենահրատապ խնդիրը աշխատատեղերի ստեղծումն է, մարդիկ պիտի աշխատանք ունենան:

Երկրորդը շինարարությունն է, քաղաքի ամբողջական վերականգնումը և տնակներից ձերբազատվելը:

Երրորդը՝ քաղաքի բարեկարգումն է:

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 38 տարեկան է:

1981 թ. ավարտել է թիվ 12 միջնակարգ դպրոցը:

1983-85 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1986 թ. ընդունվել է Գյումրիի մանկավարժական ինստիտուտի ռազմական ամբիոն:

1990 թ. աշխատել է թիվ 24 դպրոցում, որպես զինղեկ:

1999 թ. ընտրվել և 2002-ին վերընտրվել է Գյումրու համայնքի ավագանու անդամ:

- Ինչու՞ որոշեցիք երկրորդ անգամ դառնալ ավագանու անդամ:

-Ելնելով առաջին անգամվա ընտրությունից, ես գտա, որ իրոք պետք են մեր թաղին, քաղաքին: Մինչև 1999 թ. ընտրվելը, մեր թաղի ժողովուրդը ինձ էր դիմում տարբեր հարցերով և 1999-ին որոշեցի ընտրվել ավագանու անդամ, ձիշտն ասած՝ այդքան լավ չպատկերացնելով ու չգիտենալով, թե հիմնականում ինչպիսի աշխատանքներ պետք է կատարվեն, իսկ այժմ, երբ վերընտրվեցի, արդեն հստակ գիտեմ ու պատկերացնում եմ իմ պարտականությունները, իմ կատարելիք աշխատանքը: Առաջին անգամ, երբ ընտրվեցի 3 տարի ժամանակով՝ ահագին աշխատանքներ կատարել ենք ի օգուտ իմ քաղաքի, իմ ժողովրդի և որոշեցի երկրորդ անգամ էլ ընտրվել:

- Ո՞րն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:

-Գյումրիի վերականգնման գործում ավագանին այդքան լայն իրավասություններ չունի, որպեսզի ինչ-որ խոշոր բաներ կատարի, որ Գյումրին վերականգնվի: Գյումրիի վերականգնման համար հիմնականում գլոբալ հարցեր մենք չենք կարող բարձրացնել, իհարկե հարցեր բարձրացնում ենք, հիմնականում՝ քաղաքի բարեկարգման, լուսավորության, աղբահանման, մի ինչ-որ սահմանափակ ծավալի աշխատանքների համար, և, միջոցառելով՝ ժողովրդից ստացավժ անհատական դիմումներում արժարժված խնդիրները բարձրացնելով: Գյումրիի վերականգնման համար, ես նորից եմ կրկնում, այդպիսի գլոբալ հարցեր մենք չենք կարող բարձրացնել, եթե բարձրացնենք էլ, մենք դրանք լուծելու այնպիսի իրավասություն չունենք, որից և մենք և քաղաքը գոհ մնանք:

- Ո՞րոնք են քաղաքի համար այն 3 խնդիրները, որոնք առաջնահերթ լուծում են պահանջում և ի՞նչ ճանապարհով:

- Առաջինը դա աշխատատեղերի ստեղծումն է: Հիմա այդ հարցն այնքան ծեծված է, որ ամեն մարդ յուրովի պատկերացնում է ու առաջարկություններ է կատարում տարբեր ձևերով: Աշխատատեղեր ստեղծելու համար հարկավոր է շատ մեծ իրավասություններ ունենալ: Փոքր չափի աշխատատեղեր ստեղծելու համար մենք այդ գործին խթանում ենք մեր նիստերի միջոցով, երբ մարդիկ դիմումներ են տալիս փոքր չափի աշխատատեղեր ստեղծելու համար, մենք՝ ավագանին և քաղաքապետը մեկտեղ, անպայման օգնում ենք այդ մարդկանց ինչով որ կարողանում ենք: Իրոք տեսանելի է, որ քաղաքում սկսել է զարգանալ փոքր և միջին բիզնեսը, այսինքն բացվում են տարբեր տեսակի խանութներ, սրճարաններ: Գործարաններ մենք մեր ուժերով, իրավասություններով չենք կարող կառուցել: Ես գտնում եմ, որ այս հարցում պետք է լինի վերին աստիճանների հովանավորությունը:

Երկրորդ խնդիրը տնակներում բնակվող ժողովրդի հիմնախնդիրն է, որոնք զրկված են ջեռուցումից, չունեն տնակները տաքացնելու հնարավորություն: Ավագանին ու քաղաքապետը այդ մասին մտածել են և, ամենայն հավանականությամբ, Գյումրի քաղաքում կլինի փայտ, որը անվճար կբաժանվի ժողովրդին,

հիմնականում սոցիալապես անապահով խավին: Հիմա ես դա ոչ թե 100 տոկոսով եմ ասում, այլ մի 90 տոկոսով: Ես կարծում եմ, որ անապայման կլինի:

Երրորդ ամենակարևոր հարցը ես գտնում եմ մեր քաղաքի արտաքին տեսքն է, բարեկարգումը: Ինձ թվում է այս հարցում մենք այս տարի ահագին հաջողությունների հասել ենք, մյուս տարի էլ անապայման կհասնենք: Մարդիկ արդեն հոգնել են կիսափուլ ու քանդված շենքերից, քանդված փողոցներից: Մեր քաղաքում անհրաժեշտ են շատ հանգստի վայրեր՝ պուրակներ, ազատ ժամանակը անցկացնելու տեղեր: Թող շատ լինեն սրճարանները, ժամանցի վայրերը, դիսկոտեկները: Ես գտնում եմ, որ դա շատ կարևոր հարց է, որովհետև երիտասարդությունը արդեն հոգնել է, նրանք ձգտում են հեռանալ այս քաղաքից՝ չունենալով երիտասարդական կյանքը հետաքրքիր ու լավ անցկացնելու վայրեր և հեռանկարներ:

ԱՐՇԱՆՈՒՅՍ ՍԱՆՈՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 38 տարեկան է:

Ավարտել է 7-րդ դպրոցը, որից հետո ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղ:

Ծառայել է խորհրդային բանակում:

Երկրաշարժից հետո մասնակցել է շինարարական աշխատանքներին, աշխատելով «Արմինստրոյ», «Պռիբորստրոյ», Լենինականի «Շինվերանորոգման» տրեստում որպես ավագ ճարտարագետ:

1996 թվից «Կամար» ՍՊԸ տնօրենն է մինչ օրս:

- Ինչու՞ որոշեցիք դառնալ ավագանու անդամ:

- Ինչու՞ որոշեցի, որովհետև տեսնելով այսօրվա արմատական ռեֆորմները և այս շինարարական աշխատանքները, որոնք կենտրոնացել են Գյումրի քաղաքում, ունենալով շինարարի մասնագիտություն, որոշեցի անմասն չմնալ վերականգնման գործընթացից, ինչու չէ՞ կանգնել մեր նորընտիր քաղաքապետի կողքին, որպես լավ անձնավորություն, ձեռք մեկնել մեր ժողովրդին, որ կարողանանք «մատից փուշ հանել»: Եկել եմ ոչ թե ինչ որ բաների ակնկալիքով, այլ ընդհակառակը՝ իմ ուժն ու եռանդը, իմ կարողությունները իմ ժողովրդին նվիրելու:

- Ավագանու դերը քաղաքի վերականգնման գործում ո՞րն է:

- Վերակառուցման գործում առաքելությունը այսպես ասած՝ կոլեգիալ մարմին հանդես գալն է, որը հաստատում է քաղաքի բյուջեն և ունի շատ լիազորություններ ու պարտականություններ: Ավագանու և անձնական բարքն է կարևորվում այսօր, և՛ պետական մոտեցում կա, այսինքն՝ կա ոչ միայն պաշտոնական մոտեցում, այլ նաև՝ անձնական՝ զուտ մարդկային, որը ոչ մի օրենքով գրված չէ: Այսօր Գյումրի քաղաքում որևէ մեկին ձեռք մեկնելու կամ որևէ ձեռնարկության խթանելու առաքելությամբ կարող է ավագանին հանդես գալ:

- Թվարկեք քաղաքի համար այն 3 հրատապ խնդիրները, որոնք հրատապ են և լուծման ուղիները՝ ըստ Ձեզ:

- Առաջին հրատապ խնդիրը նմանօրինակ վիճակում տնտեսական իրավիճակն է, հատկապես հարկային բեռի թեթևացումը, ինչը հիմք կհանդիսանա, որ մեր քաղաքում ավելի աշխույժ եռուզեռ սկսվի, ապահովվելով ներդրողների հոսք:

Երկրորդ կարևոր խնդիրը լավ դեկավարման և կառավարման մեթոդների ապահովումն է, ինչը պետք է տա այն արդյունքները, որը կտեսնի ժողովուրդը առաջիկա 3 տարում:

Երրորդը. անչափ կարևորում եմ ժողովրդի հավատի վերականգնումը, թե տնտեսության վերականգնման, թե իշխանությունների հանդեպ, քանի որ այսօր ակնառու տեղաշարժեր կան և՛ շինարարության և՛ մյուս ոլորտներում: Մնացածը՝ պետք է կողք-կողք կանգնենք, բոլորս էլ այս քաղաքից ենք, բոլորս էլ չենք ցանկանում այս քաղաքից, հանրապետությունից հեռանալ, պետք է հավատանք:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գյուճրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, տեքստիլագործների ընտանիքում, 38 տարեկան է:

Ավարտել է թիվ 30 դպրոցը:

Ավարտել է Պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի մեխանիկական ֆակուլտետի սնունդ-արդյունաբերության բաժինը՝ ստանալով սնունդ-արդյունաբերության ինժեների որակավորում:

Ծառայել է խորհրդային բանակի օդային ուժերում:

Աշխատել է Բայանդուրի «Շիրակ» թռչնաբուժական ֆաբրիկայում՝ որպես ճարտարագետ: Այնուհետև աշխատել է Գյուճրի «Հղկող հաստոցների» գործարանում որպես առաջատար ճարտարագետ:

1990-1993 թթ. ընդունվել է և ավարտել է Մոսկվայի համախորհրդային գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան՝ ինժեներ հետազոտողի որակավորումով, և նույն տարում պաշտպանելով գիտական թեզը, ստացել է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի աստիճան:

1994 թ. աշխատել է Լենինականի հրուշակեղենի ֆաբրիկայի տնօրեն:

1996 թ. ֆաբրիկայի սեփականաշնորհվելուց հետո ընտրվել է «Գյուճրու հրուշակեղենի ֆաբրիկա» ԲԲԸ խորհրդի նախագահ:

1998 թ. գործուղվել է Հունաստան և Աթենքում մեկամսյա դասընթացից հետո ստացել է մենեջեր-մարկետինգի որակավորում:

1999 թ. ընտրվել է Շիրակի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար:

2002 թ. «Օրինաց երկիր» կուսակցության Գյուճրու «Օդանավակայան» կոչվող տարածքային կազմակերպության նախագահն է:

Անուսնացած է, ունի երեք երեխա:

- Ինչո՞ւ որոշեցիք ավագանու անդամ դառնալ:

- Ավագանու անդամ դառնալը իմ որոշումը չէ, դա նախաձեռնող խմբի՝ իմ գաղափարակիցների որոշումն է:

- Ըստ Ձեզ, ո՞րն է ավագանու առաքելությունը Գյուճրի վերականգնման գործում:

- Ես, լինելով Աժ պատգամավոր Սամվել Բալասանյանի քաղաքական գրասենյակի տնօրեն, շատ եմ կարևորում կապը տեղական իշխանությունների հետ: Ուզում եմ, որ Գյուճրի վերականգնմանը աջակցենք մեր համախմբմամբ: Քանի որ ավագանու լիազորությունները սահմանափակ են, շատ եմ կարևորում ավագանու գործունեության ընթացքում կապը օրենսդիր իշխանության հետ:

- Ըստ Ձեզ, որո՞նք են Գյուճրի համար ամենակարևոր երեք խնդիրները, և դրանց լուծման ուղիները:

- Ամենակարևոր խնդիրը Գյուճրիում զբաղվածության խնդիրն է: Ես կարևորում եմ աշխատատեղերի ստեղծումը: Արդեն իսկ սկսվել են այն ժամանակները, որ պետք է ձկուն քաղաքականություն ձեռնարկենք մանր և միջին բիզնեսի զարգացման համար, որպեսզի կարողանանք բարձրացնել զբաղվածությունը: Ցավոք, Գյուճրին այսօր զբաղվածության ամենաբարձր ցուցանիշ ունեցող քաղաքն է:

Երկրորդ կարևոր խնդիրը Գյուճրու բարեկարգումն է: Բոլորիս աչքի առաջ օր օրի վեր են բարձրանում բնակարաններ, բայց եթե մարդը աշխատանք չունեցավ, նա, բնական է, վաճառելու է այն և գնալու է այստեղից: Այսինքն՝ երկրորդ խնդիրն այն է, որ աշխատատեղերի ստեղծմամբ կարողանանք կանխել արտագաղթը:

Երրորդ կարևորագույն խնդիրն այն է, որ մեր քաղաքը վերջապես կարողանա կերտել իրեն հարիր քաղաքականություն, քանզի Գյուճրին դեռևս անձերի քաղաք է: Ժամանակն է, որ համախմբվենք և Գյուճրին ունենա իր քաղաքականությունը, դառնա քաղաքականացված քաղաք, լինի կոլեգիալ քաղաք:

ՍԵՐՉԵՅ ՀԱԿՈՐՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, բանվորի ընտանիքում, 35 տարեկան է:

Ավարտել է 29-րդ դպրոցը, կրթությունը շարունակել է Պոլիտեխնիկումում, զուգահեռ աշխատելով Գյումրիի «էլեկտրակենցաղսարք» գործարանում:

Ծառայել է խորհրդային բանակում, զորացրվելուց հետո աշխատել է «Ղարոցական սննդի» կոմբինատում, եղել է մատակարարող, այնուհետև «Արարատ Լադա» բաժնետիրական ընկերության Թորոս կայանի պետ, «Ստելյա» դուստր ձեռնարկության փոխտնօրեն, Գյումրիի էլցանցում տեղամասի պետ, «Կումայրի» ՂՁ իրացման բաժնի ճարտարագետ:

Ակտիվ մասնակցություն է ունեցել Լենինգրադյան փողոցի հուշակոթողի կառուցմանը:

1999 թվին ընտրվել է 2002-ին վերընտրվել է Գյումրու ավագանու կազմում:

- Ինչո՞ւ որոշեցիք ավագանու անդամ դառնալ:

- Մինչև ավագանի դառնալն էլ նույն մարդն եմ եղել, օգնել ու աջակցել եմ մարդկանց: Որոշել եմ ավագանի դառնալ, որ մարդկանց օգնելու հնարավորություններս ավելի մեծ լինեն:

- Ըստ Ձեզ, ո՞րն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:

- Գյումրին վերականգնվում է, մեր խնդիրն է աջակցել այդ ամենին և քաղաքապետի հետ համատեղ աշխատել:

- Որո՞նք են Գյումրիի համար ամենակարևոր 3 խնդիրները և դրանց լուծման ուղիները:

- Առաջնակարգ եմ համարում աշխատատեղերի ստեղծումը, քաղաքաշինությունը և քաղաքի բարեկարգումը: Այս խնդիրների լուծման ուղիներից մեկն այն է, որ Գյումրիում ներդրումներ լինեն և այդ ներդրումները խթանվեն:

ԱՐՄԵՆ ԹԱՄԻՐՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 34 տարեկան է:

Ավարտել է 20-րդ դպրոցը, ստացել 8-ամյա կրթություն: Ուսումը շարունակել է երկաթգծի թիվ 14 պրոֆտեխնուսումնարանում, ստացել մեքենավարի օգնականի որակավորում:

1982 թ. աշխատել է դեպոյում՝ որպես փականագործ:

1983 թ. գործուղվել է Դոնի-Ոոստով՝ երկաթուղային ինստիտուտում սովորելու, որն ավարտել է 1988 թ.՝ ինժեներ-մեխանիկի որակավորմամբ:

1988թ. աշխատել է դեպոյում՝ որպես արտադրամասի ինժեներ, մեքենավար, դեպոյի պետի օգնական, անվտանգության գծով ճարտարագետ:

2000 թվից աշխատել է որպես դեպոյի պետ:

«Օրինաց երկիր» կուսակցության անդամ է:

Անուսնացած է, ունի երկու երեխա:

- Ինչո՞ւ որոշեցիք դառնալ ավագանու անդամ:

- Ավագանու դառնալու խնդիրը քաղաքի բարեկարգման խնդիրն է, ինչն այսօր արժանի է մեծ հոգածության: Նպատակս ոչ թե ավագանու անդամ ինքնանպատակ դառնալն է, այլ իրական աշխատանք կատարելը: Շատերը փորձում են ավագանի դառնալ ոչ թե աշխատանք կատարելու, այլ այսպես ասած՝ պրեստիժ ձեռք բերելու համար: Ցանկություն ունեմ քաղաքին օգնելու, աջակցելու, քանզի դրա հնարավորությունը կա: Անկախ ավագանու անդամ դառնալուց, իմ կողմից շատ աշխատանքներ են կատարվել թե՛ մշակույթի, թե՛ սպորտի բնագավառներում: Ամեն մի աշխատանք կատարվել է անձնական եկամուտների հաշվին:

- Որ՞ն է ավագանու առաքելությունը Գյումրիի վերականգնման գործում:

- Գյումրիի վերականգնման գործում ավագանու առաքելությունը ես տեսնում եմ բյուջեի մշակման և հաստատման մեջ, որը պետք է ձևավորվի այնպես, որպեսզի հնարավոր լինի Գյումրի քաղաքը

վերականգնել: Պետք է ասեմ, որ ավագանին այսօր չունի այնքան լայնաթափ հնարավորություններ, որ այսօր իր որոշումներով կարողանա Գյումրին վերականգնել: Քանզի Գյումրին չի կարող այլ ճանապարհներով վերականգնվել, եթե չլինի աջակիցների խնդիրը, ներդնողների խնդիրը: Ավագանին բյուջեի ճիշտ որոշումով կարող է աջակից լինել Գյումրու վերականգնմանը, ուրիշ այլ կերպ հնարավորություն չունի նրան սատար կանգնելու:

- Ըստ Ձեզ, որոնք են Գյումրիի համար ամենակարևոր 3 խնդիրները և դրանց լուծման ուղիներ:

- Գյումրիում առաջին հերթում բարեկարգման, մշակույթի զարգացման, գիտության զարգացման խնդիրն է: Ամենակարևոր խնդիրը, որ գերազանցում է երեքին էլ, դա սոցիալ-տնտեսականն է, որով պետք է աշխատատեղեր ապահովել: Եթե այս գերակշռող խնդիրը լուծվի, ուրեմն մնացած երեք խնդիրները խնդիր չեն համարվի: Եթե կարողանանք քաղաքում 40-60%-ին աշխատատեղերով ապահովել, ապա քաղաքի խնդիրը կթեթևանա: Մենք պետք է աջակցենք քաղաքապետին, ստեղծենք մանր աշխատատեղեր, փոքր հիմնարկ- ձեռնարկություններ, տնայնագործություն, ինչը հնարավորություն կտա Գյումրիում զարգացնել բիզնեսը: Այսինքն՝ փոքր մասնահատիկներով գնալ ավելի մեծ քայլերի: Մենք չենք կարող այսօր քաղաքի մեջ ստեղծել մեծ ձեռնարկություններ, որովհետև համապատասխան ինվեստորներ չկան:

ԴՐԱՍՏԱՄԱՆ ԶՎԱԿԵՐՅԱՆ

Գյումրու ավագանու անդամ

Ծնվել է Լենինականում, 28 տարեկան է:

1991 թ. ավարտել է թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1995 թ. ավարտել է Գյումրու «Պրոգրես» տնտեսագիտական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

1997 թվից մինչ օրս աշխատում է «Շիրակշին» ՓԲԸ «Դվին» դուստր ձեռնարկությունում: Աշխատելու հետ միաժամանակ շարունակում է մասնագիտական կրթությունը Մոսկվայի ժամանակակից հումանիտար ինստիտուտի իրավագիտության բաժնում:

1999 թ. ընտրվել, և 2002-ին վերընտրվել է Գյումրու ավագանու անդամ:

Անկուսակցական է: Ամուսնացած է, ունի 3 երեխա:

- Ինչու՞ որոշեցիք երկրորդ ազամ դառնալ ավագանու անդամ:

- 1999թվ.-ին ընտրվեցի ավագանու անդամ, սկսեցի աշխատել ժողովրդի հետ և ժողովրդի ձայնը տեղ հասցնել վերին ատյաններ, այսինքն՝ քաղաքապետարանի, մարզպետարանի կառույցներ: Ինձ համար շատ հաճելի էր աշխատել ժողովրդի հետ, պահել ժողովուրդ-քաղաքապետարան հարաբերությունները և ընդհանրապես ժողովրդի ձայնը տեղ հասցնել՝ իրենց պրոբլեմների շուտափույթ լուծման համար: Ասեմ, որ բնակիչների մեծ մասի ցանկությունն է եղել, որ ես երկրորդ անգամ իմ թեկնածությունն առաջադրեի ավագանու անդամ:

- Ո՞րն է ավագանու առաքելությունը քաղաքի վերականգնման գործում:

- Ավագանին այդքան մեծ հնարավորություններ չունի: Դրանք ավելի բարձր ատյանների պրոբլեմներ են: Ավագանին պետք է համագործակցի և թեկուզ իր ձայնը հասցնի մինչև նախագահ, վարչապետ և վերին ատյաններ: Ինձ թվում է, որ ավագանին պետք է տեղ հասցնի թե՛ ինչ պրոբլեմներ ունի Գյումրին:

- Նշեք այն հրատապ 3 խնդիրները, որոնք առաջնային եք համարում քաղաքի վերականգնման համար և լուծման ինչ՞ ուղիներ եք տեսնում:

- Երեք խնդիրներից առաջնայինն աշխատատեղերի ստեղծումն է: Հիմա, ճիշտ է, չեն կարող կառուցել մեծ ֆաբրիկաներ, որովհետև արտադրանքը չեն կարող հանել միջազգային շուկա և, եթե հանեն էլ, արտասահմանյան ապրանքների և մեր արտադրանքի գների մեջ հսկայական տարբերություն կլինի, դա բոլորիս էլ պարզ է, մեր աչքերով ենք տեսնում: Միջին և փոքր բիզնեսի զարգացումը ես տեսնում եմ մեր տեղական գյուղմթերքների արտադրության զարգացմամբ: Եվ եթե հարկային բեռը մի քիչ թեթևանա, ինձ թվում է, որ կլինեն ներդրողներ արտասահմանից և Ռուսաստանից:

Երկրորդը բնակարանների հարցն է, ուզում եմ մեր քաղաքը ձերբազատված տեսնել տնակներից: Այդ ուղղությամբ աշխատում է և՛ ավագանին և՛ քաղաքապետը և՛ երկրի նախագահը:

Երրորդ խնդիրն իմ կարծիքով բարեկարգումն է՝ ասֆալտապատում, կանաչապատում ու լուսավորում:

USA Department of State Public Affairs supported for publishing this magazine, project "Qualitative Local Government Elections".

Thanks for supports.

The opinions expressed during the project and in magazine do not necessarily reflect the views of Department of State Public Affairs or DOS PA officials or NGO Journalists' Club "Asparez".

Այս հանդեսի լույս ընծայումը, «Որակյալ ՏԻՄ ընտրություններ» ծրագիրն իրականացվում է ԱՄՆ պետդեպարտամենտի Հանրային Հարաբերությունների գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Շնորհակալություն աջակցության համար:

Ծրագրի ընթացքում և այս հանդեսի մեջ արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել ԱՄՆ պետդեպարտամենտի Հանրային Հարաբերությունների գրասենյակի ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ Հասարակական կազմակերպության տեսակետների հետ: